

Գեղամ Մ. Բաղայան

Պատմ. գիտ. թեկնածու

**ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՊԱՏՄԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ
ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱԽՕՐԵԻՆ**

Մաս 9: Դիարբեքիի վիլայեթի Դիարբեքիի սանջակը և
Մարդինի ու Ջեզիրեի գավառները*

Բանալի բառեր - Դիարբեքիի վիլայեթ, Բշերիկ, Սլիվան
(Սիլվան), Հազրո, Լըճե, Տուռ Աբդին, Մարդին, Ջեզիրե, Շառ-
նախ, Հազախ, Վարթոն աշիրեթ:

Դիարբեքիի վիլայեթը¹ (1517-1867 թթ.՝ **Դիարբեքիի էյալեթ**, իսկ հայկ. աղբյուրներում՝ հաճախ **Տիգրանակերտի նահանգ**) Արևմտյան Հայաստանի տարածքում առավել վաղ ձևավորված օսմանյան վարչամիավորներից էր: Մինչև և 1840-ական թթ. վերջն այն ընդգրկում էր ինչպես պատմական Մեծ Հայքի հարավարևմտյան և հարավային հատվածները (**Ծովք, Աղձնիք, Կորդուք**), այնպես էլ Հյուսիսային Միջագետքը (Տուռ Աբդին, Մարդին, Մծբին-Նիսիբին, Սինջար, Խարբուր): Նրա առանձնահատկություններից մեկը կիսանկախ և ժառանգական իշխանությունների գոյությունն էր: Վերջիններիս վերացումից հետո Բ. Դուռը Դիարբեքիի արևմտյան մասում ստեղծեց **Խարբերդի էյալեթը** (1867 թվականից՝ Մամուրեթ-ուլ-Ազիզի վիլայեթ), իսկ 1879 թ. նորաստեղծ **Բիթլիսի** (Բաղեշ) վիլայեթի կազմում ներգրավեց **Խուլփի** (Կողք) և **Սղերդի** գավառները: Դիարբեքիի վիլայեթի արտաքին սահմանների ձևավորումն ավարտվեց 1885 թ., երբ Խարբերդի վիլայեթից Դիարբեքիին փոխանցվեց **Արդանա-Մաղենի** սանջակը՝ **Արդնի** և **Բալու** գավառներով: 1914 թ. Դիարբեքիի վիլայեթի տարածքը 47250 քառ. կմ էր՝ հետևյալ վարչական կառուցվածքով.

* Հոդվածն ընդունվել է տպագրության 28.02.2020:

1 Հոդվածաչափի 9-րդ մասում ներկայացված են **Դիարբեքիի վիլայեթի** Դիարբեքիի սանջակի՝ Արևմտյան Տիգրիս գետից հյուսիս ընկած գավառները, ինչպես նաև Մարդինի սանջակի համանուն գավառը և Ջեզիրեն: Հոդվածի հաջորդ մասում անդրադառնալու ենք Դիարբեքի քաղաքին, Մաղենի և Սևերակի սանջակներին, ինչպես նաև Մարդինի սանջակի մյուս գավառներին: Ներկա հրապարակումը «Վէմ» հանդեսի 2015-2017 թթ. մի շարք համարներում հրատարակված Արևմտյան Հայաստանի նախաեղեռնյան ժողովրդագրական պատկերը լուսաբանող հոդվածաչափի շարունակությունն է:

I. **Դիարբեքիի սանջակ.** գավառները (թրք. kaza)՝ Դիարբեքիի, Բշերիկի, Սլիվանի (Սիվան), Լընեի, Դերիկի:

II. **Մարդինի սանջակ.** գավառները՝ Մարդինի, Ջեզիրեի, Սավուրի (Ավինե), Միդիաթի, Մծրինի (Նիսիբին, Նիզիբին):

III. **Արդանա-Մադենի սանջակ.** գավառները՝ Մադենի, Բալուի, Ջերմուկի (Չերմիկ):

IV. **Սևերակի սանջակ.** գավառները՝ Սևերակի, Վերանշեհիի:

Հոդվածը շարադրելիս օգտվել ենք ինչպես հայերեն, այնպես էլ օտարալեզու աղբյուրներից և ուսումնասիրություններից: Այս հարցում, բնականաբար, իր կարևոր տեղն ունի հայկական նյութը: Ցավոք, Դիարբեքիի վիլայեթի առնչությամբ Եղեռնի նախօրյակը ներկայացնող աղբյուրները զգալիորեն թերի են, անգամ՝ պակասավոր: Այդ բացը մասամբ լրացրել ենք՝ օգտագործելով նաև ավելի վաղ շրջանի (1870-ական թթ.) տվյալները²:

Առանձին գավառների և բնակավայրերի վերաբերյալ ուշագրավ, իսկ հաճախ հազվագյուտ տեղեկություններ են հանդիպում հայկական տարբեր պարբերականներում տպագրված հոդվածներում³:

Դիարբեքիի վիլայեթի տարածքում գտնվող հայկական սրբավայրերի (վանքեր, եկեղեցիներ, ուխտատեղիներ ևն) մասին ուշագրավ տեղեկություններ կան մի շարք հեղինակների գործերում⁴:

Մեզ անհրաժեշտ տվյալներ են հանդիպում նաև հետեղեռնյան ժամանակահատվածում տպագրված աշխատություններում: Ժամանակագրական առումով հատուկ տեղ է գրավում մինչև 1914 թ. Դիարբեքիում Մեծ Բրիտանիայի փոխիյուպատոս Թ. Մկրտիչյանի գործը⁵: Ցավոք, գրքում զետեղված

2 Տե՛ս «Գողգոթա հայ հոգևորականութան եւ իր հօտին 1915 աղէտալի տարին», աշխատասիրելու եւ խմբագրելու **Թեոդիկ**, Պոպոլն, 1980: Հմտ. նույն գրքի 2014 թ. թե՛րանի հրատարակությունը: **Raymond H. Kévorkian, Paul B. Paboudjian**, Les Arméniens dans l'Empire Ottoman a la veille de Genocide, Paris, 1992: **Raymond H. Kévorkian**, Demographic Changes in the Armenian Population of Diarbekir, 1895-1914. - «Armenian Tigranakert/ Diarbekir and Edessa/Urfu», edited by **Richard G. Hovannissian**, Costa Mesa, California, 2006: **Սրվանդույան Գ.**, Երկեր, հատ. 2, Եր., 1980: **Տեր Կարապետեան Չղան** (Մշոյ Չղան), Տարօնի վանքերը: Ուղեւորի յիշատակներ, Եր., 2003 («Ուղեւորի յիշատակներ») հոդվածաշարը հեղինակը շարունակաբար հրատարակել է Կ. Պոլսի «Արևելք» պարբերականի 1894-1898 թթ. համարներում): Հեղինակը «Ուղեւորի յիշատակներ» հոդվածաշարից մի հատված «Ուխտավոր» ստորագրությամբ հրատարակել է նաև Թիֆլիսի «Արծազանք» լրագրի 1894 թ. N 54-55-ում: Ե. Չարենցի անվ. Գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), **Թ. Ազատյանի** ֆոնդ, բաժին III, վավերագիր N 12 (**Ղազարեան Յարութիւն**, Հազրոյ; վ. N 50 [1878 թ. Դիարբեքի քաղաքի և Տիգրիսից հյուսիս ընկած որոշ գավառների (Հայնի, Լըճե, Սլիվան, Հազրո-Ջըբկան, Միհրանի) վիճակագրությունը, որը պաշտոնական տեղեկագրից ընդօրինակել է Տիգրանակերտի առաջնորդական փոխանորդ Փիլիպոս Եպիսկոպոս Նաջարյանցը (Նաճարյանց)]: **Գ. Սրվանդույանցի** ֆոնդ, «Լրացուցիչ նյութեր», վ. N 23 (Դիարբեքի քաղաքի և Տիգրանակերտի թեմի Արևմտյան Տիգրիսից հյուսիս ընկած գավառների վիճակագրությունը կազմված Գ. Սրվանդույանցի կողմից, որը հեղինակը դուրս է բերել պաշտոնական տեղեկագրից):

3 Տե՛ս «Արարատ», Ս. Էջմիածին, 1896, N 9: «Արմենիա», Մարտի, 1896, N 80 (մայիս 13): **Քթորոյեան Գ. Ս.**, Լըճե, «Բիւրակն», Կ. Պոլիս, 1899, N 8, 11: **Ա. Ն.**, Սլիվան գաւառակ: Միւֆարդին. - «Բիւրակն», Կ. Պոլիս, 1899, N 23, 34: **Մուրատեան Գ.**, Դիտողութիւն մը, «Բիւրակն», Կ. Պոլիս, 1899, N 49: Թ., Մոռցուած անվիւններ, «Արևելք», Պոլիս, 1903, N 5304: «Տիգրիս» տարեգիրք, Հավելյ, 1946:

4 Տե՛ս **Ինճիճեան Ղ.**, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի: Ասիոյ, Եւրոպայի, Արիփիկոյ և Ամերիկոյ, մասն առաջին: Ասիա, հատ. Ա, Վենետիկ, Ս. Ղազար, 1806: **Ոսկեան Հ.**, Սեբաստիայի, Խարբերդի, Տիարպեքիի եւ Տրապիզոնի նահանգներու վանքերը, Վիեննա, 1962: **Տրդատ եպս Պպեան**, Հայ վանորայք, Սբ Էջմիածին, 2008: **Սաֆրաստյան Ա. Ն.**, Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքարանի կողմից Թուրքիայի արդարադատության և դավանանքների մինիստրության ներկայացված հայկական եկեղեցիների և վանքերի ցուցակներն ու թաքրիղները, «Էջմիածին», 1965, Ժ: 1966, Ա:

5 Տե՛ս «Տիգրանակերտի նահանգի ջարդերը եւ քիւրտերու գազանութիւնները (ականատեսի պատմութիւն)», գրեթե **Թովմաս Գ. Սկրտիչեան** (անգլիական նախկին դեր-հիւպատոս Տիգրանակերտի), Գահիրէ, 1919:

չեն վիլայեթի տարածքի հայկական բնակավայրերի, վանքերի և եկեղեցիների ցուցակները, որոնք, հեղինակի խոսքերով, նա պատրաստել էր իր դիվանագիտական աշխատանքի ընթացքում⁶, և որոնց ճակատագիրն անհայտ է:

Մեծ կարևորություն ունի Բ. Ժամկոչյանի՝ հայրենի Հայնի քաղաքին նվիրված աշխատությունը⁷:

Որոշակի հետաքրքրությունից զուրկ չէ նաև Ս. Մկունդի՝ Դիարբեքի քաղաքին նվիրված երկհատորյակը⁸:

Դիարբեքիի վիլայեթի ուսումնասիրության համար կարևոր է օտարալեզու գրականությունը: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում առանձին ռուս դիվանագետների և հետախույզների կողմից մինչև Առաջին աշխարհամարտը հրատարակված աշխատությունները: Նշենք, որ դրանց տվյալները, որպես կանոն, վերաբերում են վիլայեթի այն տարածքներին, որոնք ընկած էին Արևմտյան Տիգրիսից հյուսիս՝ մտնելով ռուսական քաղաքական հետաքրքրությունների ոլորտի մեջ⁹:

Ուշագրավ տեղեկություններ են հանդիպում Էրզրումի բրիտանական նախկին փոխխուլատոս Ջ. Թեյլորի աշխատությունում¹⁰:

Բացառիկ են (թեև տեղ-տեղ աղճատված կամ թերի) բրիտանական հետախուզական ծառայության մայր Է. Նոյելի օրագրությանը կից ներկայացված «Հուշագրի» տվյալները: Դրանք վերաբերում են Դիարբեքիի, Մադենի ու Սևերակի սանջակներում արձանագրված ժողովրդագրական պատկերին՝ ինչպես նախքան պատերազմը, այնպես էլ պատերազմի ավարտից հետո¹¹: Կարևոր տեղեկություններ են հանդիպում նաև պատերազմի ընթացքում հրատարակված բրիտանական հետախուզության ռազմավիճակագրական ուղեցույցում¹² և բրիտանացի դիվանագետ Մ. Սայքսի աշխատությունում¹³:

Մարդիկն հայերի և մյուս քրիստոնյաների մինչպատերազմյան դրության վերաբերյալ հազվագյուտ վիճակագրական տվյալներ են հաղորդում տեղում

6 Տե՛ս նույն տեղում, էջ 87: Տե՛ս նաև «Բնօրրան», Եր., 2004-2007, N 1-4, էջ 262:

7 Տե՛ս **Ժամկոչյան Բ. Կ.**, Հայնի, Պէրոթ-Լիբանան, 1952:

8 Տե՛ս **Մկունդ Տ.**, Ամիտայի արձագանքներ, Ուիհոքըն, Նիւ Ճէրզի, 1950: Նույնի Ամիտայի արձագանքներու վերակոչումն և Բ հատոր, Ուիհոքըն, Նիւ Ճէրզի, 1953:

9 Տե՛ս **Гиппиус А. И.**, Отчет о поездке 1889 года. Сборник маршрутов, пройденных в совместной поездке Д. Д. Гедеономым и А. И. Гиппиусом по пути астрономических рейсов Турецкой Армении, Курдистане и Сирии, Тифлис, 1892: **Маевский В. Т.**, Военно-статистическое описание Ванского и Битлисского вилайетов, Т., 1904 (հետաքրքիր վիճակագրական տվյալներ կան Լոճէի, Բշերիկի և Մուֆարդնի մասին): «Отчет о поездке по Азиатской Турции генерального штаба подполковника **Томилова** в 1904 году, часть первая: Район Багдадской железной дороги от Аданы до Мосула»: Նույնի часть вторая: «Подробные маршрутные описания пройденных путей от Кавказа через Курдистан и Месопотамию к Средиземному морю», С.-Петербург, 1907: **Термен Р. Т.**, Отчет о полевой поездке 1907 года в Ванском, Битлисском и Диярбекирском вилайетах, Тифлис, 1909:

10 Տե՛ս **Taylor J. G.**, Travels in Kurdistan, with Notices of the Sources of the Eastern and Western Tigris, and Ancient Ruins in Their Neighbourhood. – “Journal of the Royal Geographical Society of London”, vol. 35, 1865:

11 “Diary of Major E. Noel on Special Duty: Memorandum”, 1919 (ա. տ.): Տեղեկություններն է. Նոյելը հայթայթել է Մարդիկն դոմինիկյան միաբան Հիասենտ Սիմոնի (Hyacinth Simon) տեղեկագրից: Տե՛ս **David Gaunt**, with assistance of **Jan Bet Sawooc** and an appendix of documents prepared by **Rasho Donef**, Massacres, Resistance, Protectors. Muslim-Christian Relations in Eastern Anatolia during World War I, New Jersey, “Gorgias Press”, 2006, էջ 302:

12 Տե՛ս “A Handbook of Mesopotamia”, vol. IV: Northern Mesopotamia and Central Kurdistan, Admiralty War Staff, Intelligence Division, April, [London], 1917:

13 Տե՛ս **Sykes M.**, The Khalif’s Last Heritage. A Short History of the Turkish Empire, London, 1915:

միսիոներական գործունեություն ծավալած ֆրանցիսկյան և դոմինիկյան հոգևորականները¹⁴:

Մարդինի հայ և ասորի բնակչության վիճակը և կոտորածների պատմությունը բացահայտելու տեսանկյունից անգնահատելի է Ա.Ի.Բ. ստորագրած հեղինակի (լրիվ անունը հայտնի չէ) արաբերեն հուշագրությունը (վերնագիրը՝ «Հուշեր Մարդինից»), որը զուգահեռ հրատարակվել է նաև ֆրանսերեն¹⁵:

Թեմայի լուսաբանման համար բացառիկ է ամերիկահայ ուսումնասիրող Ս. Կարայանի աշխատությունը՝ Արևմտյան Հայաստանի և ողջ Օսմանյան կայսրության հայաբնակ բնակավայրերի վերաբերյալ, որը հեղինակի երկարամյա տքնաչան աշխատանքի արդյունքն է և հրատարակվել է նրա մահվանից հետո՝ «Կոմիտաս» ինստիտուտի կողմից¹⁶:

Շվեդ գիտնական Դ. Գաունթի ուսումնասիրությունը հատուկ կարևորություն ունի հատկապես Մարդինի սանջակի ասորի բնակչության դրության ուսումնասիրության համար: Հեղինակի կողմից լայնորեն օգտագործվել են վիճակագրական բնույթի բացառիկ փաստաթղթեր, որոնցում հազվագյուտ տվյալներ կան նաև Դիարբեքիի վիլայեթի հայ բնակչության մասին¹⁷: Ուսումնասիրության համար արժեքավոր են նաև Ի. Տերնոնի¹⁸, Ս. Հեննոյի¹⁹, Յ. Գաբրիելի²⁰ աշխատությունները, որոնցից նույնպես օգտվել ենք հոդվածը շարադրելիս: Օգտագործել ենք նաև ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դասախոս Հարություն Իսրայելի Գրիգորյանի և ասորի հասարակական ու մտավորական գործիչ Ժան Բեթ-Սավոկեի (Jan Bet Sawoce)՝ անձամբ մեզ հաղորդած որոշ տվյալներ: Օգտվելով առիթից՝ շնորհակալություն ենք հայտնում Գոռ Երանյանին և Միհրան Մինասյանին՝ տրամադրած նյութերի համար:

Հոդվածի սկզբում կցանկանայինք ընդհանուր գծերով ներկայացնել մեր դիտարկումները Դիարբեքիի վիլայեթի հայ բնակչության 1914 թ. թվաքանակի վերաբերյալ: Հարցը բարդանում է նրանով, որ այս վարչամիավորը հայ պատմագրության մեջ ներկայացված է բավական վատ և հատվածային ձևով: Շատ դեպքերում անհրաժեշտ տվյալները ցրված են այլևայլ պարբերականներում կամ պարզապես բացակայում են: Այս ամենը զգալի, երբեմն լուրջ բարդությունների առաջ է կանգնեցնում ուսումնասիրողներին: Պակաս կարևոր չէ նաև այն հան-

14 Տե՛ս «Les missions catholiques», tome quarante-sixième (janviere-décembre 1914), 1915 (ա. տ.):
 15 Տե՛ս «Studia Orientalia Christiana. Collectanea, 29-30: Studia-Documenta», The Franciscan Centre of Chistian Oriental Studies, Cairo-Jerusalem, 1998. Մրանցից Մարդինի կաթոլիկ վարդապետ Իսահակ Արմալլեի (Արմալթո, Ishaq Armalle կամ Armallo, ազգությամբ ասորի) հուշագրությունից մի հատված հայերեն թարգմանությամբ 1965 թ. լրյս է տեսել «Բազմավէպ»-ի (Վեներտիկ) N 4-7-ում (էջ 78-98): Կարևոր են նաև ֆրանսիացի ժակ Ռետորեի և Հովսեփ Թֆինքջիի (Մարդինի ասորի քահանա) հաղորդած տեղեկությունները:
 16 Տե՛ս Sarkis Y. Karayan, M. D., Armenians in Ottoman Turkey, 1914. A Geographic and Demographic Gazeteer, London, 2018:
 17 Տե՛ս Gaunt, նշվ. աշխ.:
 18 Տե՛ս Yves Ternon, Mardin 1915. Anatomie pathologique d'une destruction. «Revue d'histoire Arménienne contemporaine», tome IV: numéro special, Paris, 2002 :
 19 Տե՛ս «Die Verfolgung und Vernichtung der Syro-Aramäer im Tur Abdin 1915», Gesammelt vom Erzpriester Sleman Henno aus Arkah, Tur Abdin, Glane/Losser, 2005:
 20 Տե՛ս Yonan Gabriel, Ein vergessener Holocaust, Göttingen und Wien, 1989:

գամանքը, որ Դիարբեքիի վիլայեթում հայ բնակչության մի որոշ հատված մշտական տեղաշարժերի մեջ էր, ինչը լրացուցիչ դժվարություններ էր ստեղծում ամբողջական հաշվառում իրականացնելիս²¹:

1912-1914 թթ. հայտնի են Դիարբեքիի վիլայեթի հայ բնակչության մի քանի հաշվառումներ: Ամենատարածվածը, անկասկած, Կ. Պոլսի պատրիարքարանի վիճակագրությունն է (1912 թ.): Վերջինիս տվյալներով հայերի թիվը 124000 էր, որից 105000-ը՝ Դիարբեքիի, Արդնիի (Արդանա-Մադեն), Բալուի և Չնքուշի թեմերում²²: Ինչպես հայտնի է, Գրիգոր Չոհրապի հրապարակած այս տվյալները հետագայում ներկայացվեցին Փարիզի խաղաղության վեհաժողովին: 1913-1914 թթ. Դիարբեքիի (Տիգրանակերտի) հայոց առաջնորդարանն անցկացրեց նոր վիճակագրություն: Պահպանված նյութերը թույլ են տալիս եզրակացնել, որ եղել են 2 տեղեկագրեր: Առաջինի տվյալներով ամբողջ վիլայեթի հայության թիվը կազմել է **88800**, որից **3000**-ը՝ բուն քաղաքում («**Քաղաքամէջ**»): 2-րդ տեղեկագրում Դիարբեքիի հայերի թիվը նշվում է 106887²⁴: Հետաքրքիր է, որ այս թվաքանակը համընկնում է Ֆրանսիական մի հաշվառման տվյալների հետ՝ 107 000 մարդ²⁵: Ըստ էության, առաջնորդարանի հաշվառումը խիստ թերի է և խեղաթյուրված: Պետք է ենթադրել, որ սեփական վիճակագրության բացակայության պատճառով առաջնորդարանի կողմից օգտագործվել են պաշտոնական տեղեկագրերի տվյալները:

Բոլորովին այլ են **Թ. Սկրտիչյանի** և **Է. Նոյելի** ներկայացրած տեղեկությունները (պայմանականորեն՝ բրիտանական աղբյուրներ), որոնք, ի դեպ, իրականությանն ավելի մոտ են: Մեծ Բրիտանիայի փոխհյուպատոսի տվյալներով պատերազմի նախօրեին վիլայեթում ապրում էր 149000-150000 հայ²⁶: Է. Նոյելը **Դիարբեքիի, Մադենի** և **Սևերակի** սանջակների հայ բնակչության նախապատերազմյան թիվը նշում է 143540²⁷: Այդ թիվը, սակայն, աղավաղված է և վերանայման կարիք ունի: Այսպես, Բալուի գավառի հայ բնակչության թիվը նշված է **2500** տուն, բայց ողջ բնակչության թիվը՝ **2000** (sic!): Սա ակնհայտ աղավաղում է (ամենայն հավանականությամբ՝ տպագրական), և ճիշտը պետք է համարել 20000-ը (տան մեծության միջին գործակիցը (տմմգ)՝ 8 անձ): Այս ճշտումը հաշվի առնելու դեպքում վերոնշյալ 3 վարչամիավորների հայ բնակչության համար կունենանք **161000**-ը գերազանցող ցուցանիշ: Բացի այդ՝ տվյալները խիստ թերի են **Գերիկ** գյուղաքաղաքի և **Սևերակի** գավառի մա-

21 Այդ կապակցությամբ հատկանշական է մասնավորապես Թեոդիկի հետևյալ գրառումը. «Սլիվանի, Պըշերիկի եւ Լճի ուրիշ քրտաբնակ գիւղօրէի մէջ ալ կային ցանցառ թիւով Հայեր՝ միշտ տեղափոխուելու ենթակայ» (ընդգծումը մերն է - Գ. Բ.), («Գողգոթա հայ հոգեւորականութեան եւ իր հօտին 1915 աղէտալի տարին», էջ 371 :

22 Տե՛ս Marcel Léart, La Question Arménienne a la lumière des documents, Paris, 1913, p. 61: Տե՛ս ևս՝ **Թեոդիկ**, «Ամէնուն տարեցոյցը», ժՉ տարի, Կ. Պոլիս, 1922, էջ 261:

24 Տե՛ս Raymond H. Kévorkian, Paul B. Paboudjian, նշվ. աշխ., էջ 59: Հմտ. Raymond H. Kévorkian, նշվ. աշխ., էջ 254:

25 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 397, ց. 1, գ. 1, թ. 44:

26 Տե՛ս «Տիգրանակերտի նահանգի ջարդերը եւ քիւրտերու զազանութիւնները (ակնանտեսի պատմութիւն)», գրեց **Թովմաս Գ. Սկրտիչեան** (անգլիական նախկին դեր-հիւպատոս Տիգրանակերտի), էջ 63, 87:

27 Տե՛ս "Diary of Major E. Noel", էջ 10:

սին, իսկ **Սևերակ** քաղաքի համար՝ նաև խիստ թերհաշվառված: Վիճակագրական տվյալներն ընդհանրապես բացակայում են **Մարդինի սանջակի** վերաբերյալ, որի հայ բնակչության թիվը, առանձին աղբյուրների համաձայն, տատանվել է 19000-22000-ի միջակայքում (միջինը՝ **20500**)²⁸: Հետևաբար Դիարբեքիրի վիլայեթի հայության թիվը Մեծ եղեռնի նախօրեին պետք է ընդունել **180000**-ից ոչ պակաս²⁹:

ԴԻԱՐԲԵՔԻՐԻ ՍԱՆՋԱԿ

Վարչական առումով սանջակը կազմված էր նահանգապետին (թրք. vali) անմիջականորեն ենթակա, Բշերիկի, Սիվանի (Միվան, Հագրոյի հետ), Լըճեի (Լիջե, Հայնիի հետ) և Դերիկի գավառներից³⁰:

1. Դիարբեքիրի գավառ

Ընդգրկում էր Դիարբեքիրի դաշտը, որն Արևմտյան Տիգրիսի հունով բաժանվում էր արևելյան (թրք. Diarbakir Şarkovasi) և արևմտյան (թրք. Diyarbakir Garbovasi) հատվածների: Ըստ այդմ՝ Դիարբեքիրի գավառը ևս կազմված էր 2 գավառակից (նահիե)՝ **Ճարք** (թրք. Şark, թրգմ.՝ «արևելք») և **Ղարք** (թրք. Garb, թրգմ. «արևմուտք»):

Գավառի հիմնական հայաբնակ գյուղերը 24-25-ն էին: Դրանք համեմատաբար բազմամարդ էին և ունեին եկեղեցիներ (տե՛ս ստորև): Մյուս գյուղերում, որպես կանոն, բնակվում էին ժամանակավորապես հաստատված հայ ընտանիքներ, որոնք ստեպ-ստեպ տեղափոխվում էին կենցաղային և տնտեսական ավելի նպաստավոր պայմաններ ունեցող բնակավայրեր: Ուշագրավ է, որ նման գյուղերում նրանց կողմից հիմնված սրբավայրերը (հիմնականում՝ մատուռներ) նույնպես ժամանակավոր են եղել և առանց բացառության կոչվել են **Սբ Դանիել**: Այլևայլ տվյալների համաձայն՝ Մեծ եղեռնի նախօրեին Դիարբեքիրի գավառի գյուղաբնակ հայ բնակչության թիվը տատանվում էր **6000-10000**-ի միջակայքում³¹:

28 Տե՛ս **Թեղիկ**, «Ամենուն տարեցոյցը», էջ 261: Տե՛ս նաև ՀԱԱ, ֆ.397, թ. 44:

29 Հատկանշական է, որ Դիարբեքիրի դահիճ, նահանգապետ Ռեշիդի՝ 1915 թ. սեպտեմբերի 15-ին օսմանյան ՆԳՆ ուղարկված ծածկագիր հեռագրում նահանգից տարագրված հայերի թիվը նշվում է 120 000՝ առանց 1914-1915 թթ. զորակոչվածների: Ընդ որում, տարագրվածների թվի մեջ չեն մտել նաև տեղում սպանված հազարավոր հայեր (տե՛ս **Հայկազն Գ. Ղազարեան**, Ցեղասպան թուրքը, Պէրութ, 1968, էջ 191: Հմմտ. Gaunt, նշվ. աշխ., էջ 301):

30 Վերջինիս կանդրադառնանք հողվածաշարի հաջորդ մասում:

31 Վերոհիշյալ գյուղաշարքը կազմել ենք գերազանցապես 1912 թ. Դիարբեքիրի (Տիգրանակերտ) թեմի առաջնորդ Զավեն Տեր-Եղիայանի (Եղեռնի առաջին տարիներին՝ Կ. Պոլսո հայոց պատրիարք) վիճակագրության տվյալների հիման վրա: Ցավոք, Դիարբեքիրի հայոց առաջնորդարանը Մեծ եղեռնի նախօրեին թարմացված և ամբողջական նոր տեղեկագիր չի ներկայացրել:

№	ԲՆԱԿԱՎԱՅՐ	ԵԿԵՂԵՑԻ	ԴՊՐՈՑ	ԱՅԼ ՏՎՅԱԼՆԵՐ
Ա) Շարք (Արևելք) գավառակ				
1	Այնգևրի (Վերին Անքոր)			
2	Անշա(տ)			
3	Արգ-օղի			Արգ-օղին և Չորավան Սաթուգեղի գյուղակներն էին:
4	Բախչաջուղ	Սբ Դանիել (ժամատուն)		
5	Բոզփունար			
6	Դավալու			
7	Դարեգոլ			
8	Չորավա			
9	Թավուքի (Թավուխի, Թաուխու)			
10	Թարաքի (Դարաղի)			
11	Թղխաս			
12	Իրնջիլ (Իրինջիլ, Երնջիլ)			
13	Խդր Էլխաս			
14	Կարասաքալ			
15	Կաղիքոյ Փոքր (Ներքին Գաղիե)			
16	Կաղիքոյ Մեծ (Վերին Գաղիե)			

17	Կարաբաշ (Քեշիշքոյ)	Սբ Սիմեոն Սյունյակյաց կամ Սբ Սիմոն (Սբ Զրիստափոր)		
18	Հոլան (Ուլամ)			
19	Ղթըրբըլ (Խթըրբըլ, Գթըրբըլ, Փոքր Զրթըրբըլ)	Սբ Հակոբ		Գյուղը հին եկեղեցու անունով կոչվել է նաև Սբ Թումա կամ Սբ Թումաս : Վերջինից օգտվում էին թե՛ հայերը, թե՛ հակորբիկյան ասորիները: Սբ Թուման մինչև 1915 թ. հայտնի ուխտատեղի էր, ուր հիմնականում այցելում էին քաղաքի արհեստավորները: Ղթըրբըլը Դիարբեքիի բազմամարդ գյուղերից էր, որը 19-րդ դ. վերջին ուներ շուրջ 150 տուն հայ բնակչություն:
20	Մեզրե			
21	Մոլլա Ջաբըր			
22	Յաբաջի			
23	Շարաբի (Շառապի)			
24	Ջոնիկ (Ճըռնիկ)	Վրեժխնդիր Սբ Աստվածածին (ժամատուն)		
25	Սաթուգեղ (Սադուգեղ, Սաթիգեղ)	Սբ Թուխմանուկ- Սբ Խաչ		Եկեղեցու անունով գյուղը կոչվել է նաև Թուխմանուկ : Վերջինս սիրված ուխտատեղի էր, ուր Սբ Խաչավերացի տոնին այցելում էին հատկապես Դիարբեքիի արհեստավորները՝ որպես ընծա տանելով գույգ աղավնի: Գյուղի անունն ավանդաբար կապվում է իշխան Սադուն Արծրունու հետ: Առավել բազմամարդ հայաբնակ գյուղերից էր

ՎԷՆ ԽԱՄԱՆԿԱՅԿԱԿԱՆ ԽԱՆՂԵԱՆ, ԺԲ (ԺԸ) ԳՐԱՐԻ, ԹԻՎ 1 (69), ԽՈՆՎԱՐ-ՄԱՐԿ, 2020 ՊԱՏՄԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՐԱԳՐ.

				(Արգ-օղիի և Չորավայի հետ՝ 100-130 տուն):
26	Քավսե (Գավսե, Քավես)			
27	Քյարի(կ)	Սբ Քրիստափոր		19-րդ դ. սկ. բազմամարդ գյուղ էր՝ 150 տուն հայ և 450 տուն ասորի բնակչությամբ: 20-րդ դ. սկ. ևս Քյարին շարունակում էր մնալ Դիարբեքիի բազմամարդ բնակավայրերից մեկը (1914 թ. 150 հայ և 1600 ասորի բն.):
28	Քոչք			
Բ) Ղարբ (Արևմուտք) գավառակ				
1 (29)	Ալիփունար, Ալիբունար (Ալիփունար, Էլիբունար)	Սբ Աստվածածին (վանք)		Սբ Աստվածածինը քաղաքի բնակչության սիրելի ուխտավայրերից էր, ուր այցելում էին օգոստոսին՝ մեծ շուքով նշելով Սբ Աստվածածնի տոնը: Վանքի շրջաբակում կառուցված էին 10-20 սենյակներ՝ ուխտավորների համար: Գյուղի անունն առաջացել է համանուն աղբյուրից, որը բխում էր գյուղի կենտրոնում: Վերջինս հայտնի սրբավայր էր նաև մահմեդականների համար, որոնք համոզված էին, որ այն «բխեցվել» է Ալի խալիֆայի կողմից: Համաձայն մեկ այլ տեսակետի՝ գյուղի երկրորդ՝ Էլիբունար (թրք.՝ «հիսնական») կամ «հիսուն աղբյուր») անվանումն առաջացել է բազմաթիվ աղբյուրներից, որոնցից ձևավորվում է Արմ. Տիգրիսի ձախակողմյան Փայսա վտակը: Միջին դա-

				րերում գյուղում ձեռագրեր են ընդօրինակվել:
2 (30)	Բալըղի (Բալըխի)			
3 (31)	Բալուջա			
4 (32)	Գյավուրվեի			
5 (33)	Գյոզլի Վերին (Սարաբ Գյուզեի)			
6 (34)	Գյոզլի Ներքին (Վարի, Գյոլ Գուզեի)			
7 (35)	Դահլե (Տալե)			
8 (36)	Դարբաշուր (Դալբաշուր)			
9 (37)	Դենգեջուկ			
10 (38)	Չաքո			
11 (39)	Չըվրի			
12 (40)	Խմերիկ			
13 (41)	Կամիշեկ			
14 (42)	Կարաքիլիսա (Չիմմիքիլիսե)	եկեղեցի		
15 (43)	Հայ (Չիմմի) Եղիկ	Սբ Եղիա		
16 (44)	Ղըրթե (Գըրթե, թրք. Kayaardı)	Սբ Կարապետ		
17 (45)	Ղըրդալի (Փիրինջիլիք)			
18 (46)	Մըխսի-օղլի (Մղղըսի-օղլի)			
19 (47)	Նասրիկ Մեծ (Վերին Նասրան)			

ՎԷՆ ԽԱՄԱՆԿԱԿԱԿԱՆ ԽԱՆՂԵԱՆ, ԺԲ (ԺԸ) ԿՊԱՐԻ, ԹԻՎ 1 (69), ԽՈՆՎԱՐ-ՄԱՐԿ, 2020 ՊԱՏՄԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՐԴԱԳՐ.

20 (48)	Նասրիկ Փոքր (Ներքին Նասրան)			
21 (49)	Շեխքենդ			
22 (50)	Ուչքույու			
23 (51)	Չանախչի (Ղարբ Չանախչի)			
24 (52)	Չարուխիե (Չարուխչի)			
25 (53)	Ջըղսոր			
26 (54)	Սելըմի			
27 (55)	Սիրըմի			
28 (56)	Օրինակ (Օրնեկ)	եկեղեցի (ավերակ)		

ԾՆԹ.: Դիարբեքիի գավառում 1914 թ. գործում էր 11 հայկական դպրոց՝ 1300 աշակերտով:

2. Բշերիկի (Ռաշկան) գավառ

Գրավում էր վիլայեթի հյուսիսարևելյան հատվածը՝ հիմնականում ընդգրկելով Արմ. Տիգրիսի ձախակողմյան **Բաթմանաջուր** (Բաթման, պատմ. **Քաղիթթ** կամ **Շթիթմա**) օժանդակի ստորին ավազանը: Բշերիկի կազմի մեջ էր մտնում նաև նույն գետի աջակողմյան **Սավուր** վտակի ստորին (հյուսիսային) հովիտը զբաղեցնող **Բահրամքի** կամ **Բավարկա** (ասոր. Bafavoi, կոչվել է նաև **Բարավան** կամ **Թեփեքարավան**՝ կենտրոնի անունով) գավառակը (թրք. nahiyе): Արևելքից սահմանակից էր **Խարզան** (Բիթլիսի վիլայեթ), արևմուտքից՝ **Սիվան** կամ **Սիվան** (Միաֆարկին), հարավ-արևմուտքից՝ **Դիարբեքիի** կամ **Կենտրոնական**, հարավ-արևելքից՝ **Սավուր** կամ **Ավինե**, իսկ հարավից՝ **Մարդինի** գավառներին (թրք. kaza): Այս սահմանները ձևավորվել էին 1880-ական թթ. վերջին: Մինչ այդ գավառի արևելյան մասը՝ **Ներքին** կամ **Ստորին Բշերիկը**³², որն ընդգրկում էր **Բաթմանաջրի** և **Խարզանի գավառի** միջազգետքում տարածված **Բշերիկի դաշտը**, մտնում էր Բիթլիսի վիլայեթի **Խարզանի** գավառի կազմի մեջ, իսկ **Բաթմանաջրից** արևմուտք ընկած **Վերին Բշերիկը** և **Բահրամքին**

32 Մեր կարծիքով՝ վերջինս 363 թ. «ամոթալի» պայմանագրով Հռոմի կողմից պարսիկներին զիջված անդրտիգրիսյան **Rehimenae** երկրամասն է, որի անվանումը պահպանել է Բշերիկի հարավարևելյան մասում գտնվող **Ռաման** (1262 մ. թրք. Ramandağ) լեռնազագաթը:

Դիարբեքիի վիլայեթի մաս էին կազմում: Մական 1896 թ. վերոհիշյալ գավառա-մասերը միավորվեցին, և ձևավորվեց Դիարբեքիի վիլայեթի **Բշերիկի** (թրք. Beşiri) գավառը (kaza): Դրանով գերազանցապես հայաբնակ **Խարզանն ու Ներքին Բշերիկը** տարանջատվեցին՝ ընդգրկվելով տարբեր վարչամիավորների մեջ: Նման փոփոխությունները հետապնդում էին որոշակի քաղաքական նպատակներ: Պետք է նշել, որ հիմնականում մահմեդականաբնակ **Վերին Բշերիկի** և **Բահրամբի** (Բավարկա) կցումով նորաստեղծ գավառում նկատելիորեն նվազում էր հայերի տեսակարար կշիռը: Այնուամենայնիվ, մինչև Մեծ եղեռն **Բշերիկը** Դիարբեքիի վիլայեթի առավել հայաշատ վարչամիավորներից էր: Բրիտանական աղբյուրների տվյալներով՝ ցեղասպանության նախօրեին գավառում հայերի թիվը (քրդախոս՝ որպես քրդական տիրապետության հետևանք) կազմում էր 18000 (մեր հաշվարկներով՝ բնակչության շուրջ կեսը): **Բշերիկում** բնակվել են նաև մեծ թվով ասորիներ (հակոբիկյան) և եզդիներ: **Գավառի** կենտրոնն **Էլմադին** կամ **Ալմադինա** ավանն էր՝ տեղակայված Բաթմանաջրի ստորին հոսանքի ձախափնյակում, որտեղ, որոշ տվյալներով, 1890-ական թթ. ապրում էր 70 տուն հայ (շուրջ 500-600 բնակիչ): Գործում էր **Սբ Աստվածածին** եկեղեցին³³:

1890-ական թթ. Բշերիկի հայ և ասորի բնակչությունը ենթարկվեց կողոպուտի ու զանգվածային կոտորածի: Ոչ ամբողջական տվյալներով՝ հարձակման ենթարկվեցին ավելի քան 4 տասնյակ գյուղեր, լայն տարածում գտավ բռնի կրոնափոխությունը: Իսկ 1915 թ. Բշերիկի քրիստոնյա բնակչությունը գրեթե ամբողջությամբ բնաջնջվեց: Նույն բրիտանական աղբյուրների համաձայն՝ վերապրել էր հայ բնակչության ընդամենը 10 %-ը: Միայն **Զիվըկ**, **Ջնազկար** և **Գրեսիրան** գյուղերից մազապուրծ փոքրաթիվ վերապրածների ժառանգները ներկայումս ապրում են ՀՀ Արագածոտնի մարզի **Ուջան** (Վժան) գյուղում:

№	ԲՆԱԿՎԱԿԱՅՐ	ԵԿԵՂԵՑԻ	ԴՊՐՈՑ	ԱՅԼ ՏՎՅԱԼՆԵՐ
1	Ազըկ, Վերին	Սբ Գևորգ		
2	Ազըկ, Ներքին	Սբ Հակոբ		
3	Ամսո	Սբ Աստվածածին		
4	Աշըկ (Գըրբեռաշըկ)			
5	Ավիսկ			
6	Բազբութ			

33 Բնակավայրը մեր օրերում ապաբնակեցված է, իսկ բնակչությունը տեղափոխվել է ավելի արևելք գտնվող **Էլուհ** կամ **Իլուհե**, որն այժմ կոչվում է **Բաթման** (Batman):

	(Բագրուրթ)			
7	Բալարալա (Բալավալա)			Շուրջ 4 կմ հյուսիս-արևմուտք՝ Միլվանի գետի ձախ ափին, բարձրանում է Շեյխ Մարիամ լեռնակը՝ համանուն ուխտավայր-զիարեթով:
8	Բախրմն			
9	Բահագրախ (Հասրախ)			Մեզ է հասել Հասրախու վանքում (Սբ Աստվածածին) 1499 թ. ընդօրինակված մի Մաշտոց. «Արդ, գրեցաւ սբ տառս ի յերկիրս Բուղ(շ)երիկոյ , ի վանքս Հասրախու , ընդ հովանեաւ Տիրամար Սբ Աստուածածնին »:
10	Բասորիկ (Փասորիկ)	Սբ Հովհաննես (Սբ Պողոս)		Առավել բազմամարդ հայաբնակ գյուղերից էր (70-100 տուն):
11	Բասորիկ 2-րդ (Շքյաստիկ, Ըշքյաստեկ)	Եկեղեցի		1914 թ. եկեղեցում պաշտոնավարում էր Բասորիկի քահանան:
12	Բարադրեժ			
13	Բարըրլ	Սբ Սարգիս		Առավել բազմամարդ հայաբնակ գյուղերից էր (շուրջ 100 տուն):
14	Բլեյդար (Բլեդար)	Սբ Մինաս		Առավել բազմամարդ հայաբնակ գյուղերից էր՝ ավելի քան 100 տուն բնակչությամբ:
15	Բլրկան (Փլեկան)			
16	Բումբարաք (Մուբարաքա)			
17	Բրուքադերունի			
18	Գեդուկ	Սբ Թովմաս		
19	Գոնդեջանո (թրք. Yeniköy)	Սբ Գևորգ (Սբ Փրկիչ)		Առավել բազմամարդ գյուղերից էր՝ ավելի քան 100 տուն հայ բնակչությամբ:

20	Գոնդրկ (Գոնդեմրկո)	Սբ Հինգխորան		
21	Գրեսիրա(ն)	Սբ Սարգիս (Սբ Երրորդություն)		Հայ և ասորի (հակոբիկյան) բնակչությամբ մեծ գյուղ էր (150 տուն)՝ հայերի գերակշռությամբ:
22	Դաուդի (Վ. և Ն.)	Սբ Գևորգ		
23	Դեյր Համգա			Գյուղանունից կարելի է ենթադրել, որ ժամանակին այստեղ վանք է գործել:
24	Դերքլո Ամո			Գյուղանունից կարելի է ենթադրել, որ ժամանակին այստեղ վանք է գործել:
25	Դուշա (Դյուշան)			
26	Չարիկուռա	Սբ Գևորգ		
27	Չնիկ (Չուուկ)	Սբ Հակոբ		
28	Չերջիլ	Սբ Սարգիս		Գավառի առավել բազմամարդ հայաբնակ գյուղերից էր (շուրջ 100 տուն): Չերջիլից 2 կմ արևելք՝ Դաշտակրի ժայռոտ բլրի գագաթին, տեղակայված էր ասորական եպիսկոպոսանիստ Դերակիրա կամ Սուրբ Կիրակոս (Դերակեր, Դերադերա, ասոր. Dêrôkîro - «խեժավանք») մենաստանը, որը գտնվում էր Մարդինի Դեր-Չաֆարան մայրավանքի հոգևոր իրավասության ներքո (տե՛ս Մարդինի հատվածում): Նշանավոր ուխտավայր էր ոչ միայն ասորիների և հայերի, այլև եզդիների, անգամ քրդերի համար: Թերևս սրանով պետք է բացատրել, որ անգլիական աղբյուրներում այն նշվում է որպես «Մեծ հայկական մենաստան» (“Large Armenian monastery”): Մենաստանում եղել են ասորեստանյան

				սեպագրեր:
29	Չոռկան			
30	Էլեհ (Էլրիս, Իլուհե)	Սբ Աստվածածին		Առավել բազմամարդ հայա- բնակ գյուղերից էր (ավելի քան 100 տուն):
32	Էրմի (Իրմի)			
33	Թըլգոք			
34	Թըլմերջ			
35	Թըլմըզ			
36	Լիճրկ (Լըչըկան)			
37	Խասշոյիզեղ (Կասշո)			
38	Կանիգուլան	Սբ Փրկիչ		
39	Հըլգամի (Հալքամիկ)			Առավել բազմամարդ հայաբնակ գյուղերից էր (80-100 տուն):
40	Հլելի (Հլվըլան)			
41	Ղոչան (Պոճա)	Սբ Մարկոս		Գյուղից արևմուտք՝ Բաթմանի աջ ափին, գտնվում էր Ղո- չանի ուխտավայրը : Առավել բազմամարդ հայաբնակ գյու- ղերից էր (շուրջ 100 տուն):
42	Մերենան (Մարվան)	Սբ Սահակ		
43	Մեզրե (Մեզրիկ)			
44	Մզրեռաշ	եկեղեցի		
45	Մեյմունի			
46	Միրգաբեկ (Միրգաբաբան)			
47	Շանադերիկ	Սբ Թուխմանուկ		Գյուղանունից կարելի է ենթա- դրել, որ ժամանակին այստեղ վանք է գործել:

48	Ծեխչորան			
49	Շըմըզ			
50	Ջանդար	Սբ Գևորգ		
51	Ջիգարլու	Սբ Աստվածածին		
52	Ջնագկար (Ճնասքար)			Առավել բազմամարդ հայաբնակ գյուղերից էր (շուրջ 100 տուն):
53	Ռաշըկ Օմար)	(Մոլա		
54	Սարեկանիե			
55	Սինան	Սբ Սարգիս		Առավել բազմամարդ հայաբնակ գյուղերից էր, Վերին Բշերիկի կենտրոնը:
56	Սուլան			
57	Քաֆըրզո (Քաֆարզո) Ներքին			Առավել բազմամարդ գյուղերից էր՝ հայ և ասորի (հակոբիկյան) բնակչությամբ (ավելի քան 150 տուն):
58	Քաֆըրզո (Քաֆարզո) Վերին			
59	Քերըկ (Քիրիկ)	Սբ Խաչ (Սբ Գևորգ)		Առավել բազմամարդ հայաբնակ գյուղերից էր (շուրջ 100 տուն):
60	Քոռըկ	Սբ Հակոբ		
61	Քրեղի	Սբ Սահակ (Սբ Կարապետ)		

Բ) Բահրամքի (Բավարկա)

1 (62)	Ալուզ (Alouzn)			
2 (63)	Ավենան			
3 (64)	Գոնդեարդի			
4 (65)	Գոնդե Իսո			

ՎԷՆ համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) տարի, թիվ 1 (69), հունվար-մարտ, 2011 ՊԱՏՄԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐ.

5 (66)	Չերե (Zrn)			
6 (67)	Իսափունար (Իսափուար)	եկեղեցի		Տեղի քահանան հովվում էր նաև մյուս հայաբնակ գյուղերի բնակչությանը:
7 (68)	Կարափունար			
8 (69)	Մաթար (Matri)			
9 (70)	Մոլլա Դաուդան			
10 (71)	Ջըրեֆ			
11 (72)	Սադի (Sadie)			
12 (73)	Քըրքդիրեք (Գըրքդիրեք, Frdilek)			

1895-1896 թթ. համիդյան կոտորածների կապակցությամբ հիշատակվում է նաև գյուղախմբի կենտրոն **Թեփեն (Բլուր, Խարզանի գյուղերի շարքում)**: Քրդախոսության պատճառով Բշերիկի գավառում 1914 թ. գործել է ընդամենը 14 հայկական դպրոց՝ 700 աշակերտով:

ԾՆԹ. Բահրամքիի գավառակի առանձին գյուղերի համար փակագծերում տրված են ասորական անվանաձևերը:

3. Սլիվանի (Միլվան) գավառ

Ընդգրկում էր Դիարբեքիի վիլայեթի հյուսիսարևելյան հատվածը: Հյուսիսից սահմանակից էր Լըճեի, արևելքից և հարավից՝ Բշերիկի, արևմուտքից՝ Դիարբեքիի (Կենտրոնական) գավառին: Գավառի հիմնական մասը կազմում էր Արևմտյան Տիգրիսի աջափնյա **Բաթմանաջուր** վտակից արևմուտք տարածվող **Նփրկերաի** կամ **Սլիվանի դաշտը**, որը ժողովրդի շրջանում ավելի հայտնի էր **Ներքին դաշտ** անունով: Վարչականորեն **Սլիվանի** կազմի մեջ էին մտնում նաև **Հագրոյի** և **Միհրանիի** գավառակները (տես ստորև): Կենտրոնը Բաթմանաջրից շուրջ 20 կմ արևմուտք գտնվող **Միյաֆարկին** կամ **Ֆարկին** գյուղաքաղաքն էր (պատմ. **Նփրկերա**, Հայաստանի հնագույն բնակավայրերից մեկը): Վաղքրիստոնեական ժամանակաշրջանում **Նփրկերտը** կոչվել է նաև **Մարտիրոպոլիս** (հայկ. աղբյուրներում՝ Մարտիրոսաց քաղաք), որը 4-րդ դ. վերջից մինչև 6-րդ դ. վերջը կարևոր պաշտպանական հենակետ էր պարսկա-բյուզանդական սահմանագծի վրա: Արաբների կողմից

նվաճվելուց հետո քաղաքը սկսեց կոչվել **Միյաֆարկին** կամ **Ֆարկին** (արաբ. Mayyafarigın < ասոր. Mayfarqat, ուշմիջնադարյան հայկ. աղբյուրներում՝ **Մուփարդին**): Քաղաքն ավերվել և անշքացել է 15-րդ դ. կեսերին՝ վերածվելով սովորական գյուղի: 1870-ական թթ. վերջից այն կրկին ստացավ քաղաքային բնակավայրի կարգավիճակ՝ դառնալով Դիարբեքիրի վիլայեթի **Միվան** գավառի (թրք. Silvan < քրդ. **Slivani** կամ **Slemani** ցեղանունից) կենտրոնը: Հետագա տասնամյակներին Միյաֆարկինն աստիճանաբար վերածվեց բազմամարդ բնակավայրի, հատկապես երբ այդտեղ հաստատվեցին արհեստներով և առևտրով զբաղվող հարյուրավոր հայ ընտանիքներ Դիարբեքիրից, Հայնիից, նաև Հազրոյից, Հազրոյից (Մասուն), Մարդինից և Սդերդից: Առաջին աշխարհամարտի նախօրեին **Միյաֆարկին** գյուղաքաղաքն ուներ շուրջ 9000 բնակիչ, որից 4200-ը՝ հայեր: Գործում էին **Սբ Սարգիս** և **Սբ Ստեփաննոս** եկեղեցիները, Կ. Պոլսի Միացյալ ընկերության կողմից դեռ 1870-ական թթ. բացված դպրոցը: Չգալի թիվ էին կազմում նաև հակոբիկյան և քիղանի ասորիները (1300-1500 մարդ), որոնք նույնպես ունեին եկեղեցիներ: Պահպանվել էին Նփրկերտի (Մարտիրոսաց քաղաք) կրկնակ պարսպաշարի մնացորդները, հնագույն **Սրբոց Մարտիրոսաց**³⁴ և **Սբ Աստվածածին** կիսավեր տաճարները, հայկական հնագույն գերեզմանոցները՝ մեծաթիվ արձանագիր տապանաքարերով և խաչքարերով, աշտարակը, պարսկական ոճով կառուցված «հոյակապ» մզկիթը ևն: Պահպանվել էր նաև Նփրկերտի միջնաբերդը, որը ժողովուրդը կոչում էր **Զամբելֆրոշ** (պրսկ. «գամբյուղավաճառ»): Վերջինիս վերաբերյալ ավանդությունը, որը գրի է առնվել Գ. Տեր-Կարապետյանի կողմից, ուշագրավ աղերսներ ունի Շամիրամի մասին մեզ հասած գրույցների հետ:

Սիվանի գավառը Դիարբեքիրի վիլայեթի առավել հայաշատ վարչամիավորներից էր³⁵: Բրիտանական աղբյուրների տվյալներով՝ Մեծ եղեռնի նախօրեին հայերի (ներառյալ Հազրոյի գավառակի հայերը) թիվն անցնում էր 34000-ից՝ կազմելով տեղի բնակչության գրեթե կեսը: Համիդյան 1895-1896 թթ. հայկական կոտորածների ընթացքում գավառի տասնյակ հայաբնակ գյուղեր թրքական իշխանությունների հրահրմամբ քրդերի կողմից ենթարկվել են վայրագ կոտորածի ու թալանի: Մահվան սպառնալիքի տակ տեղի է ունեցել նաև հայերի զանգվածային կրոնափոխություն (ժամանակավոր): Իսկ 1915 թ. Սիվանի հայ բնակչությունը գլխովին բնաջնջվել է: Է. Նոյելի տվյալներով՝ Միյաֆարկին գյուղաքաղաքից և Սիվանի գյուղերից կոտորվել է շուրջ

34 **Սբ Մարութան** 4-րդ դ. եղել է Նփրկերտի հոգևոր առաջնորդը և մեծ հռչակ է վայելել ժողովրդի շրջանում: Ժողովուրդը նրա հետ էր կապում **Մարութուկ** կամ **Մարութա** լեռան անունը, որի գագաթին, ավանդության համաձայն, գտնվում էր սուրբ հոր գերեզմանը:
35 Հայկական ուշմիջնադարյան հիշատակարաններում գավառը կոչվում էր **Մուֆարդնայ** (Մուփարդնայ) **երկիր**: **Սիվան** (Սիլվան) տեղանունը տարածաշրջանում լայն տարածում է գտել 15-րդ դարից հետո՝ Իրաքից պատմական Աղձնիքի տարածք թրղական սուլթանի կամ սիվանի ցեղախմբի ներթափանցման հետևանքով:

31000 հայ (90 %-ը): Ծանր կորուստներ կրեցին նաև ասորիները (գրեթե ամբողջությամբ բնաջնջվել են) և հույները³⁶: Հատկանշական է, որ կոտորված քրիստոնյա բնակիչների փոխարեն արդեն 1915 թ. դեկտեմբերին թուրքական իշխանությունները Բայազետից և Դիադինից Միյաֆարկին գյուղաքաղաքում վերաբնակեցրել էին զգալի թվով մահմեդականների: Միայն մազապուրծ փրկված առանձին անհատներ են կարողացել անցնել Արևելյան Հայաստան (սերունդները բնակվում են ՀՀ Արագածոտնի մարզի **Ուշան** կամ **Վժան** գյուղում) կամ Սիրիա:

№	ԲՆԱԿԱՎԱՅՐ	ԵԿԵՂԵՑԻ	ԴՊՐՈՑ	ԱՅԼ ՏՎՅԱԼՆԵՐ
1	Աղշա (Աթշա, Ատրշե)	Սբ Սարգիս		Սլիվանի հայաշատ գյուղերից էր (շուրջ 100 տուն):
2	Ազդի(ն)			
3	Ալիբենգի (Ալիպանկի)			
4	Ալիշեմ			
5	Ալոդինա(ն)			
6	Ասլո	Սբ Դանիել		Ա. Դադոյանի տվյալներով՝ 200 տուն հայ: Գտնվում էր Սլիվանի և Հազրոյի սահմանագլխին, ինչի հետևանքով երբեմն նշվում է վերջինիս կազմում:
7	Ավանիկ (Ավանեկ)			
8	Բաբուրթին (Պապուտին)	Սբ Սարգիս		
9	Բադրկանեքեշե (Պատրքանեքեշե)			
10	Բախչան (Բախչե)	Սբ Աստվածածին		
11	Բախուս			
12	Բամեյդան			

36 Գավառի ուղղափառ հույները բնակվում էին հայկական **Բախուս** և **Քլեսա** (Քիլիսա) գյուղերում:

13	Բաշքոյուք	Սբ Աստվածածին		
14	Բաշըմըթ (Պաշըմըթե)			Հիշատակվում է Տարոնի Սբ Հովհաննեսի վանքի 1445 թ. կոնդակում («Պաշըթե»):
15	Բաշխա (Պաշխա, Պաշքա)	Սբ Աստվածածին		Հիշատակվում է Տարոնի Սբ Հովհաննեսի վանքի 1445 թ. կոնդակում («Պաշխա»):
16	Բաշքոյ			
17	Բըլբըլ			
18	Բոշասո			Հիշատակվում է Տարոնի Սբ Հովհաննեսի վանքի 1445 թ. կոնդակում («Պաշաթ»): Գյուղի մոտ պահպանվել էին իրնավուրց բերդի ավերակներ:
19	Գարունֆեթ (Ղավաֆըթ)			
20	Գալե (Կալե)	Եկեղեցի		
21	Գամհոք			
22	Գըրգյարմըկ (Կըրկարմըգ)			
23	Գյոգալդարա (Կյուգելտերե)			
24	Գոնդելավե			
25	Գուբըզի (Քափուզի)			
26	Դասընա			
27	Դարվիշփահլևան (Դարվեշի)			
28	Դերզևան (Տերկևան, Դերքե- վանք)			Գյուղում գտնվում էր Սբ Դանիելի վանքը:
29	Դերիկ (Տըրըգ)			

ՎԷՆ ԽԱՄԱՆԿԱԿԱՎԱԿԱՆ ԽԱՆՆԵԱՆ, ԺԲ (ԺԸ) ԳՐԱՐԻ, ԹԻՎ 1 (69), ԽՈՆՎԱՐ-ՄԱՐԿ, 2020 ՊԱՏՄԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐ.

30	Դերուն (Տերուն, Դերըկե Դերունի)	Սբ Գևորգ		Գյուղի մոտակայքում գտնվում էր Սբ Դանիելի վանքը:
31	Դիդան (Տիտան)			
32	Չորավա			
33	Չերրե (Չարա)			Մինչև համիդյան կոտորածներն ուներ 80-100 տուն բնակչություն, որը զգալիորեն նվազել էր:
34	Չընզըն	Սբ Դանիել		
35	Չորե			
36	Թախըկ			Ժամանակակից Hersen գյուղը (նույնանուն լեռնակի ստորոտին, նաև՝ Hızın) հիշատակվում է Տարոնի Սբ Հովհաննեսի վանքի 1445 թ. կոնդակում « Հըսուն » անունով:
37	Թըլմին			
38	Թըրբեսայի	Սբ Գևորգ		Սլիվանի հայաշատ գյուղերից էր (շուրջ 100 տուն):
39	Իսայիկ			
40	Իտշավա(ն)			
41	Կանիգուլ (Վարդադրյուր)			
42	Կավչան (Գավչան)			
43	Կարայիա (Իսարայիա)			
44	Հալդա	Սբ Սարգիս		
45	Հաջիչերքեզ			
46	Հաջիջա(ն)	Սբ Գևորգ		
47	Հեկեն (Հեկին, Հեդին)	Սբ Գևորգ		Սլիվանի հայաշատ գյուղերից էր (շուրջ 100 տուն):

48	Հյուսելյան (Հասրնաղա)	Սբ Սարգիս (Սբ Աստվածածին)		Սիվանի հայաշատ գյուղերից էր (շուրջ 100 տուն):
49	Հորմըզ (Հուրմըզ)			
50	Ղուրթն (Գուրթն, Խուրթն)	Սբ Սարգիս		
51	Մեզրն (Մազրն)	Սբ Հակոբ		
52	Մալաբաղն (Մալաբերի)			«Պատման» (Բաթման) անու- նով հիշատակվում է Տարոնի Սբ Հովհաննեսի վանքի 1445 թ. կոնդակում: Գյուղը կոչվել է նաև Փրե Բաթման (քրդ. «Բաթմանի կամուրջ»), քանի որ գտնվում էր համանուն նշա- նավոր կամրջից ոչ հեռու ³⁷ :
53	Մալամըլքո			
54	Միր-Էլիա կամ Միրալիա (Մըրառան)	Սբ Գևորգ		
55	Շարաֆըկա (Շերեֆիկան)			
56	Շըֆքաթ (Շըմքաթ)			
57	Չաթալ			
58	Չոըկ	Սբ Սարգիս		
59	Ռաշո (Գոնդեռաշո)			
60	Սալըկա(ն)	Սբ Թովմաս (Սբ Գևորգ)		
61	Սըլտի (Սուլտան)			
62	Սերդիր (Սերթիր)	մատուռ		

37 Կամրջի մասին տես «Վեն», Թ (ԺԵ) տարի, N 2 (58), էջ XXXVI:

63	Սըլոք			
64	Վայսըկանե (Վերին և Ներքին)			
65	Փերուշան (Փերիշան)			
66	Փիրեխական (Փիրախակա)			
67	Քելամո (Քարամո)			Սլիվանի հայաշատ գյուղերից էր (ավելի քան 100 տուն):
68	Քլեսա, Քիլիսա (Վերին և Ներքին)	Սբ Նշան		
69	Քնեաթ (Քնիաթ, Քիմյադ)	Սբ Աստվածածին	1	Սլիվանի հայաշատ գյուղերից էր (ավելի քան 100 տուն):
70	Քոռիթ (Գոռիթ)	մատուռ	1	Սլիվանի հայաշատ գյուղերից էր: Բնակիչները կաթոլիկ էին՝ ավելի քան 100 տուն:
71	Քուրեշ (Գուրեշյան)	Սբ Գևորգ		
72	Օմերան (Մարան)			
73	Փարհանդի (Ֆերհենտ)			
74	Ֆերա(ն)	Սբ Գևորգ (Սբ Սարգիս)		Սլիվանի հայաշատ գյուղերից էր (շուրջ 100 տուն):

ԾՆԹ.: Սլիվանի գավառում (և Հազրոյում) 1914 թ. գործել է 35 հայկական դպրոց՝ 1600 աշակերտով:

4. Հազրո-Չորկան

Սլիվանի (Սիվան) գավառի գավառակներից էր: Գրավում էր Հայկական Տավրոսից հարավ հոսող՝ Արևմտյան Տիգրիսի մի շարք վտակների ձորահովիտները (գլխավորը՝ **Հազրո** կամ **Հարգո**): Մինչև 1840-ական թթ. գավառակի տարածքի արևմտյան հատվածն ընդգրկված էր **Թարջիլի** (Թերջիլ) կամ **Չորկանի**

1	Ազրակ	Սբ Հակոբ		
2	Այնդառ			
3	Այնբրբրղ (Գոման)			Հիշատակվում է Տարոնի Սբ Հովհաննեսի վանքի 1445 թ. կոնդակում Վանք անունով: Գյուղում գտնվում էր Սբ Թովմա Առաքելո կամ Այնբրբրղի (Էյնբրեղ, արբ.-ասոր.՝ «պայծառակն» կամ «գյուրեղակն») վանքը: 1645 թ. տնտես Մահրուբը վանքին Ավետարան է նվիրել:
4	Բազմառ (Բըզմառ)			
5	Բաշնեղ (Պաշնըգ)	Սբ Աստվածածին		Հայերն ունեին դպրոց: Հազրոյի առավել բազմամարդ գյուղերից էր: Ա. Դադոյանի տվյալներով՝ Մեծ եղեռնի նախօրեին ուներ 200 տուն հայ բնակչություն:
6	Գիքան (Զաքան)			Հիշատակվում է Տարոնի Սբ Հովհաննեսի վանքի 1445 թ. կոնդակում Քրքան անունով:
7	Գուլամիրան			
8	Գրեսալաթ			
9	Դաղաշ			
10	Դերսիլ	Սբ Գևորգ		
11	Թախթան (Գոմանե Թախթան)			
12	Թարջիլ (Թերջիլ, Թրճըլ)			Համանուն իշխանապետության կենտրոնն էր: Գյուղին կից գտնվում էր Թարջու Սբ Թովմաս առաքելո վանքը, որը եկեղեցուց 9-10 դդ.. կառույց էր: 19-րդ դ. վերջին եկեղեցու պատերին դեռ երևում էին առանձին հայ հայրապետների և հոգևորականների խունացած որմնանկարներ: Հայտնի ուխտա-

				տեղի էր: Վանքում պահվում էր սրբացված ձեռագիր Ավետարան : Հիշատակվում է Տարոնի Սբ Հովհաննեսի վանքի 1445 թ. կոնդակում՝ որպես ավան: Մոտակա բարձունքին երևում էին միջնադարյան Թարջիլ (Թերջիլ, Թրոնըլ) բերդի ավերակները:
13	Իսանըկ			
14	Իջիքան (Իճըկան, Իճնճիքան)			
15	Հայդարիկան	Սբ Աստվածածին		
16	Ղազուխան			
17	Մեյքուն (Մայքուն)	Սբ Սարգիս		
18	Մերջանան (թրք. MircՉnan)			
19	Միրեկ (Միրկ, Գոմամիրկ)	Սբ Նշան		
20	Միիրանի (Չըռխիկ՛)	Սբ Սարգիս		Նույնանում է Տարոնի Սբ Հովհաննեսի վանքի 1445 թ. կոնդակում հիշատակվող Չըռխիկ բնակավայրի հետ: Գյուղի մոտ պահպանվել էր ավերակ Միիրանիի բերդը, որը 16-19-րդ դդ. համանուն ժառանգական իշխանության կենտրոնն էր: Հազարյի հայաշատ գյուղերից էր (70-100 տուն):
21	Մլուկ-Սարայ			
22	Շեյխան (Շեխան)			
23	Շեյխ-Դաուդան			
24	Ռասըլայն			Տարոնի Սբ Հովհաննես-Եղրդուտի վանքի 1445 թ. կոնդակում հիշատակվում է Ըռըսլայիմ ձևով:

ՊԱՏՄԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐ. **ՎԷՄ ԽԱՄԱԿԱՅԿԱԿԱՆ ԽԱՆՂԵԱՆ, ԺԲ (ԺԸ) ԳԱՐԻԻ, ԹԻՎ 1 (69), ԽՈՆՎԱՐ-ՄԱՐԿՐ, 2020**

25	Փիրամոն (Փիրաման)			
26	Քասրմի (Գասրմի)			
27	Քուֆարջին (Քֆրրնրն)			
Բ) Միհրանի (Միհրանիկ)				
1 (28)	Բայիք (Պայիկ)	Սբ Թովմաս	1	
2 (29)	Գըր (Կըր)			
3 (30)	Հաշթար (Հաշթեր)	Սբ Աստվածածին (Սբ Սարգիս)		Բազմամարդ գյուղ էր՝ մինչև 150 տուն հայ բնակչությամբ (Ա. Դադոյանի վկայությամբ):
4 (31)	Հողնոֆ (Հոնդոֆ, Հոտնավ)	Սբ Հովհաննես		Հիշատակվում է Տարոնի Սբ Հովհաննեսի վանքի 1445 թ. կոնդակում Հաստնա ձևով: Բազմամարդ գյուղ էր՝ 100-150 տուն հայ բնակչությամբ:
5 (32)	Ծելման (Ծելեմա, Սլեմանի)			Հիշատակվում է Տարոնի Սբ Հովհաննեսի վանքի 1445 թ. կոնդակում:
6 (33)	Ծերիալ (Ծերալ)			
7 (34)	Ջրնոխի (Ճրոնոգի)			
8 (35)	Ֆիշաթ			

ԾՆԹ.: Ս. Կարայանը, վկայակոչելով Ա. Դադոյանի անտիպ աշխատությունը, Հազրոյի կազմում նշում է նաև **Չահրան** (°), **Հաջի Դաուդագոն**⁴⁰ (հեղինակը նույնացրել է **Դադազոնի** հետ) և **Նազոցիգոն** (°) (հեղինակը նույնացրել է **Շրյաֆթանգոնի** հետ) հայաբնակ գյուղերը:

40 Ամենայն հավանականությամբ, ծեռագրի սխալ ընթերցման հետևանքով գյուղանունն աղավաղվելով տալիս է **Jaji Davda-Gom** [արևմտահայ ուղղագրությամբ **Հաջի Տաուտագոն** (տե՛ս նույն տեղում, էջ 288)]:

5. Լրճեի (Լիջե) գավառ

Լրճեի գավառը զբաղեցնում էր Դիարբեքիրի վիլայեթի՝ Արևմտյան Տիգրիսի աջակողմյան Տբնի կամ Դբնի (Չիբենե) և Ամբար (Ապար) գլխավոր բազուկների վերին ավազանում տարածվող հյուսիսային շրջանները մինչև Հայկական Տավրոսի ջրբաժան: Հարավից սահմանակից էր **Սլիվանին** (Սիլվան), արևմուտքից՝ **Ակլին** և **Բալուին**, հյուսիսից՝ **Գենջին**, իսկ արևելքից՝ **Խուլփին** (վերջին 2-ը՝ Բիթլիսի վիլայեթում): 15-րդ դ. գավառը հայտնի էր **Սլեմանիկ** («գահա Սլեմանիկ») անունով: Օսմանյան տիրապետության շրջանում (16-րդ դ.-19-րդ դ. կեսեր), գավառի տարածքում գոյություն ուներ 2 վարչամիավոր՝ **Հայնի** կամ **Հանի (Հենի)** և **Աթախի** (Լրճեի հետ) ժառանգական իշխանությունը (թրք. ocaklık): **Լրճեի գավառը** ձևավորվել է միայն 1850-ական թթ. **Լրճեի, Աթախի** և **Հայնիի** միավորումով:

Գավառի կենտրոնը **Լրճե** (Լիջե, Իլիջա) գյուղաքաղաքն էր, որի տները կառուցված էին **Ճիռո** լեռան դարավանդներին: Որպես քաղաքային բնակավայր՝ այն հանդես է եկել 15-րդ դ. սկզբին **Անտիադրյուր** գետակի **Ռիհանակ** կամ **Սբ Ռիհան** ջրառատ վայրում: Ի դեպ, գետանունից կարելի է եզրակացնել, որ այն եղել է ուխտավայր: **Լրճեի** տարածքում կային ևս 2 հորդառատ աղբյուրներ՝ **Հասենբեյը** և **Բլուլիկը** (Պլուլիք): Ընդ որում, տեղանվան **Իլիջե** (Իլիջա) տարբերակը թույլ է տալիս բնակավայրի հայկական հնագույն ձևը վերականգնել **Եղեգի** [հմմտ. Էրզրումի Իլիջե կամ Ջերմուկ բնակավայրի Եղեգի(ք) պատմական տարբերակը (հուն. Էլեգիա)]: Դրա օգտին է խոսում նաև հանքային աղբյուրների առատությունը Լրճեի շրջակայքում (թրք. Ilca - «ջերմուկ», «հանքային աղբյուր»), որոնք ժողովրդի կողմից սովորաբար կոչվել են **հեմեք**: Բնակավայրն առաջին անգամ հիշատակվում է Տարոնի Սբ Հովհաննես վանքի 1445 թ. հայտնի կոնդակում «գիղաքաղաքն **Լճե**» ձևով: Կ. Պոլսի պատրիարքարանի վիճակագրության համաձայն՝ Մեծ եղեռնի նախօրեին Լրճեն ուներ 2650 հայ բնակիչ, որոնց մեծ մասը տեղափոխվել էր Դիարբեքիրից և Բալուից: Գործում էին հայոց **Սբ Աստվածածին** եկեղեցին և 2 դպրոց: Ի դեպ, ըստ նույն վիճակագրության, Լրճեում բնակվել են նաև 1950 հակոբիկյան (յաղուբի) ասորի: Իրականում, սակայն, Լրճեի հայ և ընդհանրապես քրիստոնյա բնակչության թիվն անհամեմատ ավելին էր: Այսպես, ասորական աղբյուրների համաձայն, քրիստոնյաները (հայերի գերակշռությամբ) կազմել են գյուղաքաղաքի բնակչության մեծամասնությունը՝ 7000 մարդ կամ 58.3 % (12000-ից)⁴¹: Ըստ այդմ՝ գյուղաքաղաքի հայ բնակչության թիվը 1915 թ. անցնում էր 4000-ից (հաշվի ենք առել հայերի և ասորիների տեսակարար կշիռն

41 Տե՛ս u Gaunt, նշվ. աշխ., էջ 285:

ըստ առաջնորդարանի տվյալների)⁴²: Լըճեի և հարևան Հայնիի հայերը հիմնականում զբաղվում էին ջուլիակությամբ և կտավագործությամբ, նաև ձիապանությամբ, այգեգործությամբ ևն:

Լըճեի շրջակայքը հարուստ էր հայկական ուխտավայրերով: Շուրջ 5 կմ դեպի հարավ-արևմուտք՝ **Հանգոյ** վայրում (թրք. Hanokomu) գտնվում էին **Սրբառուց** հայկական հինավուրց վանքի ավերակները: Ավանդաբար **Լըճե** բնակավայրը նախապես գտնվել է վերջինիս մերձակայքում: **Սրբառուցը** նշանավոր ուխտատեղի էր, որտեղ մինչև 19-րդ դ. 80-ական թթ. Մեծ Պահքի 1-ին օրը (ժողովրդի շրջանում հայտնի էր որպես «մկա» կամ «մկներու երկուշաբթի» անունով) մշտապես մեծ տոնախմբություններ էին կազմակերպվում: Պահպանվել էին տեղի վանահայրերի և հոգևորականների շիրիմները, հայերեն արձանագրությունների մնացորդներ ևն: Լըճեից հյուսիս գտնվում էին **Սրբեղիան** (Սբ Եղիա) և **Սբ Սարգիս** կամ **Շեյխ Բիլան** (Պիլան) ուխտավայրերը (2-ի տեղում երբեմնի վանքեր են եղել): Բուժիչ էր համարվում նաև **Սբ Օղիտա** (Հուղիտա) կամ «**Քոթոնան-Էղբիր**» հանքային աղբյուրը, ուր գնում էին հողացավով տառապողները: Հայտնի էր նաև գյուղաքաղաքից արևելք ընկած **Թլել** կամ **Բլուր** վայրում գտնվող «**Քաֆրներու թոնիրը**» (թոնրանման քարե մեծ փորվածք):

Լըճեի գավառի տարածքում հնում գոյություն ունեին մի շարք բազմամարդ բնակավայրեր: Լըճեից շուրջ 20 կմ հարավ ընկած **Տզլիանոս** լեռնազանգվածի վրա պահպանվել էին պատմական **Փիս** կամ **Փիսոն** բերդի (հուն. աղբյուրն էրում Φεισών) ավերակները: Բերդը 4-րդ դ. - 6-րդ դ. վերջը կարևոր հենակետ էր պարսկա-բյուզանդական սահմանագծի երկայնքով ձգվող պաշտպանական համակարգում: Հայնեցի հայերի շրջանում պահպանված ավանդազրույցների համաձայն Տզլիանոսը **Տիգրան** արքայի (Տիգրան Մեծ (Պ)) ամառանոցն էր (որտեղից էլ՝ լեռնանունը): 20-րդ դ. սկզբին այստեղ պահպանվել էր բացառիկ քարանձավային բնակավայր՝ վիմավոր քարայրներով (պատերին արձանագրություններ կային), մեծաթիվ քանդակներով ևն: Նույն լեռնազանգվածի ստորոտին 20-րդ դ. սկզբին գտնվում էր ասորաբնակ **Ֆիս** կամ **Ֆիշ** գյուղը: Լըճեից շուրջ 15 կմ դեպի հարավ-արևելք՝ Բաթմանաջրի Բլուր (Թեփե) վտակի վերին ավազանում, գտնվում էր պատմական **Աթթախ** (Աթախ) բերդաքաղաքը (հուն. աղբյուրներում Ἀτταχας): 4-րդ դ. - 6-րդ դ. վերջը այն դարձյալ կարևոր ռազմական հենակետ էր Մեծ Հայքի տարածքով անցնող պարսկա-բյուզանդական սահմանի պաշտպանական համակարգում: 16-րդ դ. - 19-րդ դ. 40-ական թթ. **Աթթախը** (թրք. Atak) Դիարբեքիի էյալեթի համանուն ժառանգական իշխանության

42 Ըստ Է. Նոյելի Լըճեն (Lidjé Town) ուներ 10000 հայ բնակչություն (1200 տուն) (տես "Diary of Major E. Noel", էջ 12): Այս ցուցանիշը մեզ ուժեղացված է թվում, քանի որ իրականում գյուղաքաղաքի ողջ բնակչության թիվն է եղել 10000 -12000: Համոզված ենք, որ բրիտանացի հեղինակի տվյալներում Լըճեի հետ գրանցված է նաև վարչակազմի նույն գավառի մեջ մտնող **Հայնի** քաղաքի հայ բնակչության թիվը (որոշ տվյալներով՝ 5000-7500 մարդ) (տես **Ժամկոչյան**, նշվ. աշխ., էջ 20):

(թրք. ocaklık) կենտրոնն էր, բազմամարդ բնակավայր (միջնադարյան հայկական աղբյուրներում այն անվանվում է «քաղաք»)։ Հիշվում է նաև Տարոնի Սբ Հովհաննեսի վանքի 1445 թ. կոնդակում Աթաղ (որպես «ղղեակ», իմա բերդաքաղաք) կամ յԱտախ անուններով։ Մինչև 19-րդ դ. 1-ին կեսը համանուն ժառանգական իշխանության կենտրոնն էր։ Բերդաքաղաքն ավերվել և ամայացել է 19-րդ դ. 40-ական թթ. վերջին։ 20-րդ դ. սկզբին դեռ պահպանվում էին Աթթախի աշտարակների և պարսպաշարի, 2-3 եկեղեցիների և հայոց ընդարձակ գերեզմանատան ավերակները։ Երբեմնի բերդաքաղաքի տարածքում Մեծ եղեռնի նախօրեին գտնվում էր հայաբնակ **Այնթաղ** գյուղը։ Բազմամարդ էր նաև Լըճեից 20 կմ հյուսիս՝ Հայկական Տավոս լեռնաշղթայի պատմական Կղեսուրք կամ Օլորի լեռնանցքի շրջանում գտնվող **Ռաբաթ** կամ **Ռապատ** բերդաքաղաքը (ձեռագրական մի հիշատակարանում կոչվում է «քաղաք»)։ Վերջինս եղել է Տարոնի Սբ Հովհաննեսի վանքի թեմապատկան բնակավայրերից (հիշվում է վանքի 1445 թ. հայտնի կոնդակում «ղղեակն յՌապատե ձևով)։ Հայտնի էր բերդաքաղաքի **Տիրամօր Սբ Աստուածածին** եկեղեցին։ Ուշագրավ է, որ Ռաբաթի հարևանությամբ կար Քաղբիկ անունով գյուղ։

Օսմանյան տիրապետությունը և անբարենպաստ պայմանները պատճառ են եղել, որ 20-րդ դ. սկզբին Լըճեի գավառի մի զգալի մասում հայ բնակչության էթնոտարածքը զգալիորեն կրճատվել է։ Հայաթափությունը հատկապես ակնառու էր **Հայնիի** գավառակում (nahiye), որը զբաղեցնում էր գավառի արևմտյան հատվածը, ինչպես նաև հյուսիսային՝ **Տբնի** գետի ակունքների (մերձտավրոսյան) շրջանում։ Հայ բնակչությունը ծանր կորուստներ կրեց հատկապես 1890-ական թթ.։ Սրանով հանդերձ՝ Լըճեի գավառը Մեծ եղեռնի նախօրեին համարվում էր վիլայեթի հայաշատ վարչամիավորներից մեկը։ Է. Նոյելի տվյալներով՝ 1915 թ. հայերի թիվը 16000 էր։ Լըճեի գավառում բնակվում էին նաև մեծաթիվ ասորիներ (տարբեր տվյալներով՝ 2000-4000 մարդ)։ Ցեղասպանության ժամանակ գավառի քրիստոնյա բնակչությունը գրեթե ամբողջությամբ բնաջնջվեց։ Փոքրաթիվ վերապրածները ցրվեցին տարբեր երկրներում։ ՀՀ Արագածոտնի մարզի Ուջան կամ Վժան գյուղում ապրում են **Գըր, Սառնես** և **Հարբախնե** գյուղերից փրկվածների սերունդները։

Մուրբ Մակաբայեցվոց կամ Անթախի վանք

Աթթախ պատմական բերդաքաղաքի ավերակներից շուրջ 4 կմ դեպի հյուսիս-արևելք՝ լեռնային աղբյուրաշատ վայրում գտնվում էր Լըճեի գավառի նշանավոր **Սբ Մակաբայեցվոց** կամ **Անթախի** (Անթղու, Աթխո, Ախթայի) վանքը։ Ավանդության համաձայն՝ վերջինս հիմնել է Սբ Գրիգոր Լուսավորիչը Սբ Թադեոս Առաքյալի կողմից կառուցված մատուռի տեղում, որտեղից էլ՝ վանքի **Սբ Թա-**

դեռու (Սբ Թադե) կամ **Սբ Եվստաթե** (Սբ Ստաթե) անվանումները: Սրբավայրի հիմնական անունը կապված է **Մակաբայեցի Սբ Ճամունեի** և նրա 7 որդիների հետ, որոնց մատուները, ըստ ավանդության, թաղված էին վանքի բակում գտնվող մի կաղնու հովանու ներքո: Մենաստանը հայտնի էր նաև **Սբ Առաքելոց** (Ժողովրդի շրջանում՝ Սբ Առաքյալ՝ ի պատիվ Սբ Անդրեասի) և **Սպիտակ վանք** անուններով: Մենաստանը լուսավորության և հայ գրչության հնագույն կենտրոն էր, նշանավոր ուխտավայր: 15 դ.-18 դ. վերջը մենաստանն իր շրջակայքով մտնում էր Տարոնի Սբ Հովհաննեսի վանքի թեմի մեջ: Ի դեպ, վերջինիս 1445 թ. հայտնի կոնդակում հիշատակվող **Վանք** գյուղն ամենայն հավանականությամբ տեղակայված է եղել Սբ Մակաբայեցվոցի հարևանությամբ: Մենաստանի երբեմնի հարուստ ձեռագրական հավաքածուից 19-րդ դ. վերջին պահպանվել էին շուրջ 3 տասնյակ մատյաններ (մեծ մասը՝ զգալիորեն վնասված): Նշված վանքից 2-2.5 կմ դեպի արևմուտք գտնվում էր ասորական **Սուրբ Կույս** մենաստանը, որտեղ պահվում էին Սբ Կիրակոսի (Սբ Խրիստիա) մատուները և հնագույն մագաղաթյա մի Ավետարան:

№	ԲՆԱԿԱՎԱՅՐ	ԵԿԵՂԵՑԻ	ԳՊՐՈՑ	ԱՅԼ ՏՎՅԱԼՆԵՐ
1	Աղքան (Աղկամ, Ախտըկան)	Սբ Նշան		Լրճեի բազմամարդ հայաբնակ գյուղերից էր (շուրջ 100 տուն):
2	Անթաղ (Այնթաղ, Աթթախ, Աթախ, քղղ. Կոտա)	Սբ Ստեփաննոս		Գյուղից շուրջ 4 կմ հարավ-արևմուտք՝ Բայթմանաջրի Բլուր կամ Թեփե վտակի ակունքներում գտնվող Մըշրիֆ (թրք. Mışrif) գյուղը նույնացվում է Տարոնի Սբ Հովհաննեսի վանքի 1445 թ. կոնդակում հիշատակվող Մըշրիկ բնակավայրին:
3	Բամըթին (Յամիթին)	Սբ Խաչ		
4	Գըր (Բլուր, թրք. TepekՓy)	Սբ Պողոս-Պետրոս		Գյուղին հարավից սահմանակից, երբեմնի հայաբնակ Aruzazam գյուղը հիշատակվում է 1445 թ. Տարոնի Սբ Հովհաննեսի վանքի կոնդակում Արաւսք ձևով: Գըր-Բլուրը Լրճեի բազմամարդ հայաբնակ գյուղերից էր (շուրջ 100 տուն):
5	Գում (Գումն, Գուման, Գոյմահ,	Սբ Նշան (ավեր.)		Եկեղեցին ուխտատեղի էր, ուր հաճախում էին դեղնախտով

	Ճում)			(«ղեղնություն») տառապող հիվանդները: 1570 թ. Գումում («Գումա») Ավետարան է ընդօրինակվել: Գյուղից հյուսիս գտնվում էր Շեյխ-Թեմպուկ կոչվող ուխտատեղին (համանուն լեռնագագաթին, թրք. Şeyhtanbur), ուր հատկապես հաճախում էին ամուլ կանայք: Լըճեի հայաշատ գյուղերից էր (շուրջ 100 տուն):
6	Դարագոլ			
7	Դերիկ			
8	Թուզա			
9	Կանեսպի			
10	Հալիալ	Սբ Գևորգ		
11	Հազմազ			
12	Հարաք			
13	Հարբախնե	Սբ Գևորգ		4 դ. մինչև 6-րդ դ. վերջը կարևոր ամրոց էր Մեծ Հայքի տարածքով անցնող պարսկաբյուզանդական սահմանագծի պաշտպանական համակարգում (հուն. աղբյուրներում՝ Ἀρβόχων): Հարբախնեից մի փոքր արևելք գտնվող Գերիկ գյուղում պահպանվել էին մենաստանի ավերակներ: Լըճեի հայաշատ գյուղերից էր (80-100 տուն):
14	Հեզան			Գտնվում էր Հեզանքիլիսա < Հեզանավանք լեռնագագաթի (1409 մ) հյուսիսային ստորոտին: Չի բացառվում, որ ժամանակին այստեղ եղել է մենաստան: Հեզանից 7 կմ հյուսիս՝ Լըճեի ճանապարհին գտնվող Ճանաձոր երբեմնի հայաբնակ գյուղը (20-րդ դ. սկ.՝ Cinezur) հիշատակվում է Su-

				րոնի Սբ Հովհաննես վանքի 1445 թ. կոնդակում:
15	Մալախյան (Մլա, Մողլա)	Սբ Շամունե (Սբ Սարգիս)		Մալախյանը Լըճեի հայաբնակ մեծ գյուղերից էր (1914 թ.՝ 85-100 տուն բնակիչ):
16	Նունեսա (Լունիաս)	Եկեղեցի (ավեր.)		Հիշվում է Տարոնի Սբ Հովհաննեսի վանքի 1445 թ. կոնդակում:
17	Շամշամ (Շամշան)	Սբ Հովհաննես (ավեր.)		Լըճեի հայաբնակ մեծ գյուղերից էր (որոշ տվյալներով՝ 1914 թ. 350 տուն բնակիչ):
18	Շատիկ (Շատիկ, Շատկոց, Շատըհ)	Սբ Սարգիս		
19	Շրկակա			
20	Ջոմար (իկ)			Հիշվում է Տարոնի Սբ Հովհաննեսի վանքի 1445 թ. կոնդակում Ճոմարիկ ձևով:
21	Սառնես (Սառնիս)	Սբ Թովմաս		Գյուղի շրջակայքում կային 4 ավերակ եկեղեցիներ՝ Ս. Հակոբ, Ս. Սարգիս, Ս. Թորոս, Սար Շամոն : Հայաշատ էր:
22	Սարդե (Սըրդե)	Սբ Թորոս		
23	Քարվազ (Քարոզ)			Հիշվում է Տարոնի Սբ Հովհաննեսի վանքի 1445 թ. կոնդակում:
24	Օփում (Փում)	Սբ Կիրակոս (Սբ Հակոբ)		Հիշատակվում է դեռ Ք. ա. 9-7-րդ դդ. ասուրական սեպագրերում որպես Շուրբիս (Արմե) երկրի «արքայական» քաղաք: 4-7-րդ դդ. կարևոր ամրոց էր Մեծ Հայքի տարածքով ձգվող պարսկա-բյուզանդական սահմանագծի վրա (հուն. աղբյուրներում՝ Ռֆոսմոն): Լըճեի բազմամարդ հայկական գյուղերից էր՝ ավելի քան 120 տուն բնակչությամբ:

ԾՆԹ.: Լրճեի գավառում (Հայնիի հետ) 1914 թ. գործել է 5 հայկական դպրոց՝ 305 աշակերտով: 1913-1914 թթ. Տիգրանակերտի առաջնորդարանի վիճակագրական տեղեկագրի մեջ Լրճեի կազմում նշված են նաև հարևան **Փեչարի** հայաբնակ գյուղերը, որոնք վարչականորեն մտնում էին Բիթլիսի (Բաղեշ) վիլայեթի Գենջի սանջակի մեջ⁴³:

6. Հայնի (Հանի, Հենի, Հայնե)

Հայնին Լրճեի գավառի երկրորդ քաղաքային բնակավայրն էր (թեև տեղացիներն անվանում էին «գեղ». հմմտ. **Չեյթունը**) և համանուն գավառակի (թրք. nahiyе) կենտրոնը: Կառուցված էր Հայկական Տավրոսի ճյուղավորումը համարվող **Ներիբ** կամ **Ներքը** լեռնաշղթայի (նույնանուն է ասուրական սեպագրերում հիշատակվող Nirbu կամ Niriba շրջանի հետ) հարավային ստորոտին՝ **Կապան** գետակի աջափնյակում տարածվող համանուն արգասաբեր հովտում: Որպես «քաղաք» հիշատակվում է դեռ Տարոնի Սբ Հովհաննեսի վանքի 1445 թ. կոնդակում: Բնակավայրի ձևավորման գործում էական դեր է կատարել հորդառատ և նշանավոր **Էնդեբիրը** (Էնգեպիր, արաբ. Ayn kâbir - «մեծ աղբյուր») բնակչության ջրամատակարարման գլխավոր աղբյուրը, որի անունից էլ, ըստ ժողովրդական ստուգաբանության, առաջացել է **Հայնի** տեղանունը: Ընդհանրապես Հայնիի տարածքը և շրջակա լեռներն աչքի էին ընկնում բազմաթիվ ջերմուկներով ու հանքային բուժիչ աղբյուրներով, որոնք միաժամանակ կարևոր ուխտատեղիներ էին (**Գու Բերդիկ**՝ կիսավեր ամրոցի անունով, **Գոգ** կամ **Գոգի**, **Էռքին աղբյուր**, **Նըրխընիզ** կամ **Սբ Հովհաննես**, **Պըսել**, **Վեգիրիկ** կամ **Վոգիրիկ** ևն): Հայնին հարուստ էր նաև բազմաթիվ հնավայրերով: Զաղաքի տարբեր վայրերում պահպանվել էին հնագույն պարսպաշարն ու բերդի աշտարակներ: Հայնիի հարավային մասում պահպանվել էր **Խաչքար** կոչվող եկեղեցու ավերակը, որը հայկական հայտնի սրբավայրերից էր: Հայտնի ուխտատեղի էր **Յոթը սյունի մուղարա** քարանձավը, որտեղ, ժողովրդի համոզմամբ, ոգի (ջին) էր բնակվում: Հայնիի արևելյան մասում գտնվում էր **Թուխ մանուկ** ուխտատեղին (աղբյուր՝ շրջապատված ծառերի պուրակով և փոքրիկ խաչքարերով): Նշանավոր էր նաև քաղաքից հարավ-արևմուտք ընկած **Տպուրկա** լեռնապարի (Տպուրիկ) վրա գտնվող **Դեղիբա** (Տետիպա) վայրը, որի սրբացված քարայրներում ճգնարաններ են եղել: Նույն վայրում բխում էր **Ըմպիլակ** ջերմուկը: Եկեղեցու մնացորդներ և հայկական գերեզմաններ էին պահպանվել նաև Հայնիի այլևայլ վայրերում: Մեծ համբավ էր վայելում **Բըրբըլե** (Պըրբըլե) կամ **Բըրբըլե** (Պըրբըլե) հսկա քարայրը **Ներիբի** լեռներում, որտեղ հայտնաբերվել էր ասորեստանյան սեպագիր արձանագրություն⁴⁴:

43 Տես «Վեմ» համահայկական հանդես, Եր., 2016, N 3 (55), էջ XXXIII- XXXVI:
44 Ավելի մանրամասն տես **ժամկոչյան Բ.**, նշվ աշխ., էջ 7-19:

Մեծ եղեռնի նախօրեին Հայնիի հայ բնակչության վերաբերյալ վիճակագրական տեղեկությունները հակասական են և խիստ թերիաշվառված: Հաշվի առնելով Է. Նոյելի և ասորական աղբյուրների տվյալները (տե՛ս Լրճեի հատվածը)՝ կարելի է եզրակացնել, որ քաղաքում հայերի թիվը 1915 թ. կազմել է նվազագույնը 6000, որը քաղաքի բնակչության կեսից ավելին էր⁴⁵:

Հայնիի հայաբնակ գլխավոր թաղերն էին **Բանձր թաղը** (մահմեդականները կոչում էին **qâla** կամ **bîrj**, իմա՝ «բերդ»), **Խուցը** (տեղացիների բարբառով՝ «դպրոց») և **Եկեղեցու** կամ **Ժամուն**, որոնք տեղաբաշխված էին քաղաքի արևելյան և հարավային մասերում: Վերջիններս բաղկացած էին ավելի փոքր թաղամասերից՝ **Օրթախուց**, **Տեր-Վանեսենց**, **Նաջարենց** (Նաճառենց), **Դանոյենց**, **Ջըիակենց**, **Եփրեմենց**: Հայնիի **Սբ Աստվածածին** եկեղեցին (Ժամը)՝ կից դպրոցով, գտնվում էր հայկական թաղի կենտրոնում: Փոքրաթիվ հայերի ավետարանական (բողոքական) եկեղեցու հետևորդներ էին, որոնք ունեին ժողովարան և դպրոց: Տեղի հայերը հիմնականում զբաղվում էին արհեստագործությամբ (լայն տարածում ունեին մասնավորապես ջուլիակագործությունը): Հայնին հռչակված էր նաև հարուստ այգիներով, որոնց շնորհիվ ապահովվում էր բնակիչների մի զգալի մասի բարեկեցությունը:

Քաղաքի մահմեդական բնակչությունը գերազանցապես կազմված էր դնիկ-«զազաներից», որոնց թաղերը զբաղեցնում էին Հայնիի արևմտյան և հարավային հատվածները [**Չեյվան**, **Ամչիկ**, **Շուկայի**, **Դերեզայան** («Տերեկայան»)]:

Օսմանյան տիրապետությունը և օտար էթնիկական տարրի ներթափանցումը բացասական ազդեցություն են ունեցել Հայնիի գավառակի բնակչության ազգային նկարագրի վրա: Տեղեկություններ են պահպանվել նաև բռնի կրոնափոխության մասին: Այսպես, հայնեցի հայերի շրջանում տարածված էր, որ **Ներիբ (Ներբա)**, **Մուգուրգեղ** (Մաքուր գեղ, Makriyan կամ Mukriyan) և **Սալորիկ** գյուղերի բնակիչների նախնիները հայ են եղել: Հանդիպում էին նաև հայկական անունները պահած առանձին բնակավայրեր, որոնցից էր Հայնիից 14 կմ հյուսիս-արևմուտք՝ Տրնի գետի ափին գտնվող **Ագրակ** գյուղը (թրք. Akrek): Դիարբեքիի (Տիգրանակերտ) առաջնորդ Փիլիպոս Եպիսկոպոս Նաջարյանցի 1878 թ. տեղեկագրի ոչ ամբողջական տվյալներով՝ գավառակում կար 7 ավերակ գյուղ: Դրանցից **Սիտրեն**, մեր կարծիքով նույնանուն է Տարոնի Սբ Հովհաննեսի վանքի 1445 թ. հայտնի կոնդակում հիշատակվող **«Սրտե»** (> Սիտրե) բնակավայրի հետ: Ընդ որում, գյուղերի թվարկման հաջորդակաությունը թույլ է տալիս վերջինս տեղադրել Հայնի քաղաքի հարավային կող-

45 Այս կապակցությամբ Բ. Ժամկոչյանը հետևյալն է նշում. «Վիճակագրութիւն չունինք մեր առջև: Տրուած թիւերուն համաձայն 1500-2000 տուն և 10000-15000 բնակչութիւն ունէր Հայնին...: Բնակչութիւնը կը բաղկանար Հայ և Զազաներէ: Սօտաւորապէս կէս առ կէս, թերևս քիւրտերը (զազա-դնիկները - Գ.Բ.) տունով աւելի, սակայն շունչով գրեթէ հաւասար» (նույն տեղում, էջ 20):

մում: Չի բացառվում, որ այս գյուղից բնակչությունը (կամ նրա մի մասը) հետագայում տեղափոխվել և Լրճեի գավառում՝ Ներիբի լեռների հարավային ստորոտին, հիմնել է **Սարդա** կամ **Սերդե** նույնանուն բնակավայրը: Մեզ հասանելի սկզբնաղբյուրների համաձայն (Գ. Սրվանձոյանց, Փ. Նաջարյան) եթե Հայնիի գավառակի տարածքում 1870-ական թթ. վերջին հայաբնակ էր 8 գյուղ, ապա 1915 թ. այստեղ մնացել էր միայն 1-ը՝ **Գարթինը** (Գըթին, Բարթին): Հայնիի հայաթափումը վերջնականապես ավարտվեց Մեծ եղեռնի ժամանակ, երբ տեղի հայությունը բնաջնջվեց (նրա հետ՝ նաև մեծաթիվ ասորի համայնքը):

1	Բալընջնե (Պալինճնե)			Հիշատակվում է Տարոնի Սը Հովհաննեսի վանքի 1445 թ. կոնդակում Պալինճնե ձևով:
2	Բարբաշ (Պարպըշ)			
3	Գարթին (Գըթին, Բարթին)			
4	Չարա			Հիշատակվում է Տարոնի Սը Հովհաննեսի վանքի 1445 թ. կոնդակում Չըռայ ձևով:
5	Խըռջիկ (Խրոջիկ)			
6	Հավրե (Հավրան)			
7	Ջումայիկ (Ճումայիկ)	Սը Աստվածածին		
8	Քարազ (Քարազիկ, Կարաս)	Սը Սարգիս		Համանուն գավառակի կենտրոնն էր: Քարազից շուրջ 7 կմ հարավ-արևմուտք՝ համանուն գետի ափին գտնվում էր երբեմնի հայաբնակ Ամբար գյուղը, որը հիշվում է Տարոնի Սը Հովհաննես վանքի 1445 թ. կոնդակում Ապար (< Անբար-Ամբար) անունով: Ավելի հարավ՝ դարձյալ նույն գետի ափին, գտնվում էր Ստեփանոս Տարոնացու (11-րդ դ.) երկում հիշատակվող Փշիաշ վայրը (20-րդ դ. սկ.) Başbaş գյուղ):

ՊԱՏՄԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՐԱԳԻ. վե՛ր համահայկական հանդես, ժԲ (ժԸ) տարի, թիվ 1 (69), հունվար-մարտ, 2020

ՄԱՐԴԻՆԻ ՄԱՆՁԱԿ

Գրավում էր Արևմտյան Տիգրիսից հարավ և Տիգրիս գետի գլխավոր հունից արևմուտք ընկած շրջանները, որոնք հայ պատմագրության մեջ հայտնի են **Միջագետք Հայոց** ընդհանուր անվամբ: Մանջակի տարածքի կենտրոնով ձգվում էին Հայկական լեռնաշխարհի հարավային սահմանագլուխը կազմող **Մասիուս** կամ **Մասիոն** լեռները (Մարդինի լեռներ):

1. Մարդինի գավառ

Ընկած էր վիլայեթի հարավարևելյան մասում՝ զբաղեցնելով պատմական **Մասիուս** կամ **Մասիոն** լեռների հարավային ստորոտներից մինչև Սիրիական անապատ ձգվող տարածքները: Հյուսիսից սահմանակից էր **Սավուրի** (Ավինե) և **Միդիաթի**, արևելքից՝ **Մծբինի** (Նիսիբին), արևմուտքից՝ **Գերիկի** գավառներին, իսկ հարավից՝ **Չորի** (Գեր-Չոր) ինքնուրույն սանջակին: Պատմականորեն Մարդինի գավառն ընդգրկում էր ստորական հնագույն **Տուռ Աբդին** երկրամասի արևմտյան շրջանները: Կենտրոնը **Մարդին** քաղաքն էր, որը Մասիուսի կամ Մարդինի լեռների հարավային ստորոտի երկայնքով ձգվում էր շուրջ 5 կմ: Վաղմիջնադարյան հայկական սկզբնաղբյուրներում վերջինս հիշատակվում է «**Մարդէ բերդ**» անունով (հնր. κάστρον Μάρδος) 20-րդ դ. սկզբին կիսավեր էր և գրավում էր քաղաքի վրա իշխող ժայռերի գագաթները: Մարդինը շրջապատող միջնադարյան պարսպաշարն ուներ 4 «դուռ» (դարպաս)՝ **Մեշքին քափու** կամ **Չեյթունի դուռ** (արևմուտքում), **Բաբ-ալ-Մուրադ** կամ **Մշո դուռ** (հյուսիսում), **Բաբ-ալ-Չեղիդ** կամ **Նոր դուռ** (հարավում) և **Բաբ-ալ-Սոր** կամ **Սավուրի դուռ** (արևելքում): Մեծ եղեռնի նախօրեին Մարդինի բնակչությունն անցնում էր 40000-ից: Ընդ որում, **կեսից ավելին** (շուրջ 21000 մարդ) կազմում էին քրիստոնյաները: Հայերի (գերազանցապես կաթոլիկ, նաև բողոքական և առաքելական) թիվը 9000-10000 էր (1600 տուն)⁴⁶: Գործում էին 2 հայկական եկեղեցի՝ **Սբ Գևորգ** (մայր եկեղեցի, 5-րդ դ. կառույց) և **Սբ Հովսեփ**, և 2 հայկական դպրոց: Բողոքականներն⁴⁷ ունեին 4 ժողովարան (հաճախում էին նաև ավետարանական ասորիները) և 5 դպրոց: Մարդինում էր գտնվում հայ-կաթողիկե եկեղեցու եպիսկոպոսական թեմը, որի իրավասության ներքո էին նաև **Գեր-Չորը**, **Բաղդադը** և **Բասրան**: Մարդինի թեմի վերջին առաջնորդն էր հայտնի հոգևոր գոր-

46 Դիարբեքիի առաջնորդարանի տվյալներով Մարդինի հայ բնակչության թիվը շուրջ 7700 էր: Տե՛ս **Raymond H. Kévorkian, Paul B. Paboudjian**, նշվ. աշխ., էջ 413: Հմնտ. **Raymond H. Kévorkian**, նշվ. աշխ., էջ 282: Տե՛ս ևս՝ «Գողգոթա հայ հոգևորականության եւ իր հօտին 1915 աղէտալի տարին», էջ 384:

47 Մեզ հասանելի վիճակագրական տվյալների թմնությունը (հայկական, եվրոպական, նաև պաշտոնական) թույլ է տվել եզրակացնել, որ բողոքականների (protestants) գերակշիռ մեծամասնությունը կազմել են հայերը (տես «Գողգոթա հայ հոգևորականության եւ իր հօտին 1915 աղէտալի տարին», էջ 384: Հմնտ. *Les missions catholiques*, էջ 30): Մ. Օրցիկյանի աշխատության մեջ հիշվում են նաև **Սուսյան** և **Դևերու** հայաբնակ գյուղերը (տես **Օրցիկյան**, նշվ. աշխ., էջ 422): Մեր կարծիքով՝ դրանցից առաջինը Մարդինից 15 կմ արևմուտք գտնվող Մուդին է, իսկ երկրորդը նույն Դարայի աղավաղված տարբերակն է:

ծիչ **Իգնատիոս** արքեպիսկոպոս **Մալոյանը**: Մարդինի շրջակայքում կա 2 հայկական վանք: Մարդինից շուրջ 5 կմ հարավ-արևմուտք գտնվող **Մուսկի** (Մուսրբիյե) գյուղի **Սբ Հովհաննես Մկրտիչ** մենաստանը՝ հայտնի **ԹՎին** (Թֆնա) անապատ անունով, 14-15-րդ դդ. հայ գրչության երևելի կենտրոն էր: Ի դեպ, Իգնատիոս Մալոյանի ջանքերով վանքում իրականացված աշխատանքների ընթացքում մինչև Մեծ եղեռնը հայտնաբերվել էին մի շարք հնագույն արձանագրություններ:

Մարդինի հարավային կողմում գտնվող **Սբ Վարվառեի** վանքը կառուցվել էր 17-18 րդ դդ. սահմանագլխին և տեղի հայերի սիրելի ուխտավայրերից էր: Մարդին քաղաքի շուրջ 2000 տուն հաշվվող ասորի բնակչության մեծ մասը հակորիկյան դավանանքի էր (1200 տուն, ունեին 4 եկեղեցի և 3 դպրոց): Քաղաքից շուրջ 5 կմ դեպի հարավ-արևելք գտնվում էր հակորիկյան եկեղեցու պատրիարքի (պաշտոնապես՝ Անտիոքի պատրիարք) կենտրոնը՝ **Սբ Անանիայի** վանքը (ասոր. Mor Hananyo), որն ավելի հայտնի էր **Դեր Չաֆարան** անունով (Մար Չաֆարան, Դեյր-ուլ-Չահվարան, ասոր. «ծիրանե վանք»): Առանձին եկեղեցիներ և դրանց կից դպրոցներ ունեին նաև կաթոլիկ ասորիները և քիլդանիները: Մարդինում կար նաև «լատինական» (կազմված եվրոպացի տարբեր ժողովուրդների ներկայացուցիչներից) փոքր կրոնական համայնք՝ իր եկեղեցիով (ուներ նաև 3 դպրոց): Քաղաքում կային ֆրանցիսկյան և կապուցինյան վանքեր, ամերիկյան բողոքական առաքելություն, որոնք իրենց հերթին պահում էին տղաների և աղջիկների դպրոցներ:

Հայաբնակ երկրորդ խոշոր կենտրոնը Մարդին քաղաքից 25 կմ հարավ-արևմուտք ընկած առևտրի և արհեստների կենտրոն **Թիլ-Արմեն** կամ **Թել-Արմեն** ավանն էր (թրգմ. «հայաբլուր», թրք. Koçhisar, քրդ. Xussar): Բնակավայրը գերազանցապես հայաբնակ էր՝ 700 տուն բնակչությամբ (ավելի քան 4000 մարդ՝ դարձյալ կաթոլիկ)⁴⁸: Ավանում գործում էր **Սբ Գևորգ** եկեղեցին: Նշենք, որ առանձին ուսումնասիրողներ **Թիլ-Արմենը** նույնացնում են Տիգրան Մեծի կողմից Միջագետքում հիմնադրված **Տիգրանակերտի** հետ⁴⁹:

Գավառի երրորդ հայաբնակ բնակավայրը Մարդինից 23 կմ հարավ-արևելք գտնվող **Դարա** (ասոր. Dora, թրք. Karadara) ավանն էր՝ տեղակայված համանուն բերդի ստորոտին: Ընդհանուր առմամբ Մարդինի գավառի հայ բնակչության թիվը Մեծ եղեռնի նախօրեին հասնում էր 15000-ի:

Մարդինում թուրքական իշխանությունների սանձազերծած հակահայկական և ընդհանրապես հակաքրիստոնեական գործողությունները թափ առան 1915 թ. գարնան վերջից: Հունիսի առաջին տասնօրյակին նախօրոք հորինված կեղծ մե-

48 Դ. Գաունթի հաշվարկներով՝ 6000 բնակիչ: Ի դեպ, կաթոլիկ հոգևորական Հովսեփ Թֆնքչիի տվյալներով ավանում ապրում էին նաև փոքրաթիվ քիլդանիներ (տես Gaunt, նշվ. աշխ., էջ 261):
49 Ըստ Ի. Արմալլեի (Արմալլոն)՝ Թիլ-Արմենը կառուցվել էր ավերված Տունայսեր բնակավայրի տեղում: Տես «Բազմավեպ», Վենետիկ, 1965, N 4-7, էջ 80:

դադրանքներով բանտ նետվեցին հայ և ասորի առավել ազդեցիկ ավելի քան 800 գործիչներ, որոնց ոչնչացրին Մարդինից շուրջ 8 կմ հյուսիս-արևմուտք գտնվող Այն-Ամարո աղբյուրի շրջակայքում (պատմական **Չարզավան** բերդի մոտ): Նահատակվածների մեջ էր նաև **Իգնատիոս** եպս. **Մալոյանը**: Դրան հետևեցին քաղաքի հայ բնակչության համատարած արքայն ու բնաջնջումը: Դոմինիկյան միաբան Ժակ Ռետորեի տվյալներով կոտորածին զոհ գնաց Մարդինի հայերի 97 %-ը: Գրեթե ամբողջությամբ ոչնչացվեց **Թիլ-Արմենի** և **Դարայի** հայ բնակչությունը: Ծանր կորուստներ կրեցին նաև ասորիները: Նույն հեղինակի հաշվարկներով զոհվել էին **Մարդինի** քրիստոնյաների 86 %-ը, հակոբիկյանների 57 %-ը և բողոքականների 18 %-ը: Չարդերի այիքը ներառեց նաև Մարդինի ասորական մեկ տասնյակ ավաններն ու գյուղերը: Լրիվ ոչնչացվեց **Բեխայրեի** (Բուքեյրի), **Բրահեմիեի** (Աբրահամիա, Թիլ-Արմենի հայերի հետ), **Գուլիեի** (Գյոլլու), **Դարայի**, **Մանսուրիի** (Մանսուրիա) բնակչությունը: Իսկ Մարդինի շրջակա **Բենաբիլ** (հին հայկական Բնաբեղ բերդը) և **Ղալաթմարա** գյուղերի բնակիչների հիմնական մասը (ավելի քան 1000 մարդ), ապաստանելով Դեր--Չաֆարանի վանքում, ինքնապաշտպանության շնորհիվ թեև խուսափեց գլխովին ոչնչացումից, բայց մեծաթիվ կորուստներ ունեցավ համաճարակներից:

Տեղասպանության հետևանքով Մարդինն իր շրջակա բնակավայրերով փաստորեն զրկվեց հայ և ասորի բնակչությունից: 1975 թ. միայն փոքրաթիվ ասորական համայնքներ էին պահպանվել **Բենաբիլ**, **Դարա**, **Ղալաթմարա** և **Մանսուրի** գյուղերում:

ԾՆԹ.: Մարդինի գավառում 1914 թ. գործել է 4 հայկական դպրոց՝ 800 աշակերտով:

2 . Ջեզիրեի գավառ

Զբաղեցնում էր Դիարբեքրի վիլայեթի ծայր հարավարևելյան հատվածը՝ ընդգրկելով Տիգրիսի վերին հոսանքի ավազանի ինչպես աջափնյա՝ համեմատաբար տափարակ, այնպես էլ ձախափնյա **Կորդվաց** կամ **Արարադի** (Ջուդի) լեռների շրջանները: Հյուսիսից և արևելքից սահմանակից էր **Բիթլիսի**, հարավից՝ **Մոսուլի** վիլայեթներին, իսկ արևմուտքից՝ **Մծքինի** (Նիսիբին) և **Միդիաթի** գավառներին: Կենտրոնը Տիգրիսի աջ ափին կառուցված՝ **Ջեզիրե** (արաբ. Jezirät-ibn-‘Umar, ասոր. Gziro կամ Gozarto, պատմ. **Բզաբդե**) քաղաքն էր: Տեղի 25 ընտանիքից կազմված հայ կաթոլիկ համայնքի տրամադրության տակ կար մի մատուռ (ժամատուն): Ի դեպ, Ջեզիրեից շուրջ 12 կմ դեպի հյուսիս-արևմուտք՝ Տիգրիսի աջ ափին՝ **Ֆինիկ** (Փինիկ) գյուղի մոտ էր գտնվում հնագույն Կորդուքի հայկական թագավորության մայրաքաղաք **Փինակը** (հնր. Πίνακα), որը, Ստրաբոնի վկայությամբ, ուներ 3 միջնաբերդ:

16-րդ դ.-19-րդ դ. 40-ական թթ. Ջեզիբեն Դիարբեքիրի էյալեթի մեջ մտնող **Բոհտանի** իշխանապետության (քրդ. Jizirâ-Botan) կենտրոնն էր, որին ենթարկվում էին նաև հարևան մի շարք գավառներ (Տուռ Աբդին, Արուհ-Արվախ, Բարվարի ևն): Դիարբեքիրի կազմում այն շարունակեց մնալ մինչև 1870-ական թթ. վերջը: Բիթլիսի վիլայեթի ստեղծումով (1879 թ.) վերջինիս միացվեց Բոհտանի հյուսիսային հատվածը, իսկ հարավային շրջանները՝ **Ջեզիբեն, Ճառնախը, Սլոփին, Հազախը** ևն, գավառի (kaza) կարգավիճակով մնացին Դիարբեքիրի կազմում:

Մինչև 19-րդ դ. կեսերը պատմական Բոհտանի տարածքում ապրել են զգալի թվով հայեր: 16-րդ դ. քուրդ պատմիչ **Ճարաֆ-խան Բիթլիսիի** տվյալներով՝ երկրամասի առանձին շրջաններում հայերը հավատակից ասորիների հետ կազմել են մեծամասնություն: Սակայն քրդական ցեղերի անընդմեջ ներհոսքը զգալիորեն աղճատել է Բոհտանի ազգային նկարագիրը: Ավելին՝ քրդական տիրապետությունն էական ազդեցություն է թողել հայ բնակչության կենցաղի վրա: Հատկապես պատմական **Կորդուքի** տարածքը զբաղեցնող և փարթամ արոտավայրերով հարուստ Արարաղի (Ջուղի) լեռների շրջանի հայերն աստիճանաբար դարձել էին քրդախոս՝ ընդունելով քոչվորական կենսակերպը (կոչվում էին **քոչարներ**՝ թրք. köçer-ից): Վերջիններիս շարունակում էր իրենց արմատներին կապել միայն քրիստոնեությունը⁵⁰:

20-րդ դ. սկզբին հայ բնակչությունը հիմնականում տեղաբաշխված էր Ջեզիբեի գավառի հետևյալ շրջաններում.

1. Տիգրիսի աջափնյակ, որն ասորական աղբյուրներում հնում կոչվում էր **Բեթ-Չաբդե** (Beth Zabdai): Մեզ հասանելի աղբյուրների տվյալներով՝ հայաբնակ էին **Առնապատ** (Ernabat), **Բռըբըթ** (Birabeyt), **Գունդըկիշեխ** կամ **Գունդիկշեխ**, **Թըղար**, **Խնդուք** կամ **Խանդակ** (Hendekköyü), **Ջռահի**, **Ներքին Մզըր** (Mezraa), **Փռըք** (Pirik) գյուղերը:

2. Տիգրիսի ձախափնյակ, որն ընդգրկում էր հնագույն **Կորդուքի** հարավային մասը և վաղ միջնադարում հայտնի էր որպես «**Բերկրացուց գաւառ**»⁵¹, իսկ նոր ժամանակներում՝ **Սլոփի**⁵² (թրք. Slopi bölgəsi): Մեզ հասանելի աղբյուրների տվյալներով՝ հայաբնակ էին **Գունդիկմլա** (ասոր. Mollagbeunro), **Դերգուլ**, **Ջդեր** (Դահեր՝ Սլոփիից հյուսիս-արևմուտք), **Ճառնախ**, **Սլոփի** (Սլոփիա, քրդ. Girikoma - թրգմ. «Բլրագոմեր») գյուղերը: Նշված բնակավայրերի շարքում բազմամարդ բնակչությամբ առանձնանում էին **Դերգուլը**⁵³ և **Ճառնախը** (թրք. Şernak): Ընդ որում, վերջինից շուրջ 3 կմ հարավ գտնվող **Հաշտան** (քրդ. Hâştan) գյուղը նույն-

50 Քոչվոր հայերի թիվն ընդհանրապես մեծ էր ողջ Բոհտանում: Այդ մասին տես «ՎԷՄ», Եր., 2017, Ը (ԺԴ) տարի, N 4 (56), էջ XX-XXI:
51 «Սրբոյն մերոյ **Մովսէսի Խորենացոյ** Մատենագրութիւնք». «Մատենագրութիւնք նախնեաց», Վեներտիկ-Սբ Դազար, 1865, էջ 300: Կարծում ենք սա որոշակի աղբյուր ունի տարածքի **Բրքե** կամ **Բերքի** (Birki) գյուղանվան հետ:
52 Առաջին անգամ հիշատակվում է Խորենացու վերոհիշյալ երկրում «**վեառն Սողոփի**» կապակցության մեջ: Սա, ըստ էության, **Կորդուք** կամ **Արարաղի** (Ջուղի) լեռների հարավային ճյուղավորման հնագույն անվանումն է:
53 Հմնտ. «ՎԷՄ», Եր., 2017, Ը (ԺԴ) տարի, N 4 (56), էջ XXVII:

անում է Պատմահոր կողմից հիշատակվող **Թմնիս** կամ **Թման** (ասոր. տարբերակը, ըստ Ղ. Ինճինյանի, «**գեղ ութից**») քաղաքագյուղի հետ, որտեղ, ասորական միջավայրում տարածված ավանդության համաձայն, Ջրհեղեղից հետո հանգրվանել էր Նոյան տապանը:

Համաձայն Տիգրանակերտի (Դիարբեքիր) առաջնորդարանի 1913 թ. վիճակագրության՝ Ջեզիրեի գավառի հայ բնակչության թիվը հասնում էր 4300-ի (գերագանցապես՝ կաթոլիկներ), որից 1565-ը՝ վրանաբնակ քոչվորներ⁵⁴: Ցավոք, ավելի ամբողջական և ճշգրիտ տվյալներ մեզ հայտնի չեն: Գավառում մեծ թիվ էր կազմում նաև ասորի բնակչությունը (ըստ ասորական պատվիրակության՝ Փարիզի խաղաղության խորհրդաժողովին ներկայացրած տեղեկագրի՝ ավելի քան 17000 մարդ)⁵⁵:

1915 թ. Ջեզիրեի հայերն ու ասորիները ենթարկվեցին հրեշավոր բնաջնջման, և միայն սակավաթիվ բնակիչների հաջողվեց փրկվել՝ ապաստանելով լեռներում: Դրանց մեջ որոշակի թիվ էին կազմում վրանաբնակ հայերը: Այս առումով առանձնանում է հայկական **Վարթոն աշիրեթը** (թրք. Ermeni Varto, քրդ. Malâ Varto), որի անդամներն Արարադի (Ջուդի) լեռներում իրենց ավանդական կենցաղը շարունակեցին մինչև 1970-ական թթ., երբ վերջնականապես տեղափոխվեցին Ստամբուլ⁵⁶: Իսկ մագապուրծ փրկված ասորիները հեռացան Ուրմիա և Մոսուլ:

Թուրքական իշխանությունների և քրդական աշիրեթների վայրագություններին հերոսական դիմադրություն ցույց տվեց Ջեզիրեից շուրջ 40 կմ հյուսիս-արևելք՝ Տիգրիսի աջափնյակում գտնվող **Հազախ** կամ **Ազախ** ավանի բնակչությունը: Հազախը գավառակի կենտրոն էր, իսկ բնակիչներն աչքի էին ընկնում ըմբոստությամբ և մարտունակությամբ: 1915 թ. գարնան վերջին, ասորիների նկատմամբ հալածանքների ալիքին զուգահեռ, ավանի բնակչության շրջանում ուժեղացել էր արհավիրքին զենքով դիմագրավելու ձգտումը: Փրկվելով կոտորածից՝ Հազախում ապաստանել էին հարևան առանձին գյուղերի (**Բարբկա** կամ **Բարիկ**, **Գարիսա**, **Քուվախ** և ն) բնակիչները: Պետք է նշել, որ թրքական իշխանությունների համար Հազախի վրա հարձակվելու պատրվակ հանդիսացավ ինչպես այս բնակավայրի հայերի ըմբոստությունը, այնպես էլ մահվան քարավաններից մագապուրծ փրկված շուրջ մեկ տասնյակ հայերի՝ ավանում հայտնվելը: Սկզբնապես իշխանությունները փորձեցին օգտագործել քուրդ-ասորական լարվածությունը: Սակայն ասորի պաշտպանների (վերջիններս կոչվում էին **Հի-**

54 Տե՛ս «Գողգոթա հայ հոգեւորականութեան եւ իր հօտին 1915 աղէտալի տարին», էջ 390: Հմմտ. **Raymond H. Kévorkian**, նշվ. աշխ., էջ 282: Վերոհիշյալ տեղեկագրում Ջեզիրեի գավառում են նշված նաև սահմանակից Մոսուլի վիլայեթի Ջախտ ավանը և Սև Չաղր կամ Քոյչեր համայնքը, որը նույնպես գտնվում էր Ջախտի շրջանում և կազմված էր քոչվորական կենցաղով ապրող հայերից (այժմ՝ Իրաքում): Այդ մասին Արշակ Ալադյանյանը հետևյալն է գրում. «Գողգոթեի 20 տունով, որոնք ցանուցիր վիճակ մը ունենալով, գրկուած են եկեղեցիէ և դարոցէ» (**Ալադյանյան Ա.**, Իրաքի հայերը, Եր., 2003, էջ 132): Ըստ էության, Ջախտն և հարակից քոչվոր հայերը եկեղեցական առումով միացված են եղել Ջեզիրեին:

55 Տե՛ս **Gaunt**, նշվ. աշխ., էջ 426:

56 Մանրամասն տե՛ս **Մելքոնյան Ռ.**, Իսլամացված հայերի խնդիրների շուրջ, Եր., 2003, էջ 44-48:

սուսի ֆիդայիներ) հաջող հակահարվածները հարկադրեցին օսմանյան հրամանատարությանը լիովին ստանձնել սվանի «ասպտամբությունը» ճնշելու գործը, որը սկզբում ներկայացվում էր իբրև Հազախում ամրացած հայերի «խռովություն»: Այս ստահող լուրերը, որոնք սկզբում ընդունում էին նաև մի շարք գերմանացի բարձրաստիճան գինվորականներ (օր. կարճ ժամանակով Էրզրումում գերմանական փոխհյուպատոսի պաշտոնը ստանձնած Մ. ֆոն Շոյբներ-Ռիխտերը, որը Հազախը համարում էր «հայկական գյուղ». sic!), շատ շուտով հօդս ցնդեցին, հատկապես՝ պատժիչ զորամասերի դեմ 1915 թ. նոյեմբերի կեսերին ինքնապաշտպանության դիմած մարտիկների կազմակերպած հաջող գործողություններից հետո: Ի վերջո, չնայած անձամբ տիրահույսակ Էնվերի՝ Հազախը հիմնահատակ կործանելու համար հրամաններին, թուրքական զորքերը հետ քաշվեցին⁵⁷:

ԾՆՌ.: Ջեզիրեի գավառում 1914 թ. գործել է 5 հայկական դպրոց՝ 500 աշակերտով:

Գեղամ Մ. Բաղայան-գիտական հետաքրքրությունների շրջանակում են Հայաստանի պատմական աշխարհագրությունը, պատմական ժողովրդագրությունն ու քարտեզագրությունը:

Summary

THE HISTORICAL-DEMOGRAPHIC IMAGE OF WESTERN ARMENIA ON THE EVE OF THE ARMENIAN GENOCIDE

Part Ninth: Diyarbekir sanjak of Diyarbekir vilayet and the cantons of Mardin and Jezireh

Gegham M. Badalyan
Candidate of Historical Sciences

Key words - Diyarbekir vilayet, Bsherek, Slivan (Silvan), Hazro, Ltche, Tur Abdin, Mardin, Jezireh, Sharnakh, Hazakh, Varto Ashiret.

Diyarbekir vilayet was one of the earliest (created in 1517 AD) Ottoman administrative units and until the first half of the 19th century included both the southwestern and southern parts of historic Great Armenia (Tsopk, Aghdznik, Korduk), and the Northern Mesopotamia (Tur Abdin, Mardin, Mtsbin-Nisibin, Snjar,

57 Հազախի ինքնապաշտպանության մասին մանրամասն տե՛ս Gaunt, էջ 273-294:

Khabur). One of its important features was the existence of semi-independent principalities and successor princedoms. After their elimination, from the end of the 1840s, the Sublime Porte initiated the implementation of substantial modifications to the boundaries and internal structure of the Western Armenian administrative units. As a result, new Kharberd eyalet (since 1867 – the Mamuret-ul-Aziz vilayet) was formed in once the whole western part of Diyarbekir and in 1879 the newly established Bitlis (Baghesh) vilayet was given Khulp (Koghb) and Sgherd cantons. The formation of the outer borders of Diyarbekir vilayet (the provinces of the Ottoman Empire had been renamed vilayets since 1867) was accomplished with the transfer of Arghana (Ergan)-Maden sanjak from Kharberd in 1885. Prior to World War I, the internal administrative structure of the vilayet was also finalized, consisting of 4 sanjaks (Diyarbekir or Central, Arghana-Maden, Mardin, Severak) and 15 cantons (Turkish: kaza). The territory of Diyarbekir vilayet was 47.250 sq. km.

From a statistical point of view, particularly with regard to the Armenian population, in the sources Diyarbekir vilayet is presented in a rather poor and fragmentary manner, and the available data are either contradictory or simply missing. That is the reason that the researcher often encounters significant, even serious difficulties. The point is that the data of the Constantinople Patriarchate, which was obtained from the Diyarbekir Diocese, were usually based on improper records. Thus, in the known Armenian statistical bulletins of 1912-1914 the number of Armenian population in the vilayet varies between 88.000-124.000. Quite different are the data of Tovmas Mkrtichyan and Edward Noel, who are conventionally called British by us – 140.000-150.000 people.

Specifically, some adjustments and additions to more detailed E. Noel's indices allowed one to conclude that on the eve of World War I the Armenian population of Diyarbekir vilayet reached 180.000. In addition, the majority of the Armenians was located in the cantons of Diyarbekir, Bsharik, Slivan (Silvan), Ltche (including the provincial center) located north of the Western Tigris, which were administratively included within the Central sanjak. The only exception was the Derik canton, located in the south of the Western Tigris (on the right) in the Masius or Mardin Mountains. Among the aforementioned administrative units, the neighboring Slivan and Bsharik (Rashkan), who occupied the fertile trans-Tigris and fields of Nprkert and Bsharik, were particularly notable for the abundance of Armenian population. By 1915 there were more than 130 villages and settlements populated by Armenians. This number may be even greater as the Armenian population of many cantons of Diyarbekir is characterized by high mobility and often relocated to more economically advantageous settlements. Hazro canton (Turkish: nahiye) was much populated by Armenians, which was administratively part of Slivan. Mihran (in Armenian sources: Mihranik) – the eastern part of Hazro, was a self-governing Armenian-Kurdish principality until the

40s of the 19th c. The number of Armenians was also considerable in Ltche canton and in the town of Haini located in the southern foothills of the Armenian Taurus. A large number of Armenians lived in the immediate vicinity of the city of Diyarbekir, located in the middle of the Western Tigris Basin – the oldest agricultural center in the Amid valley with its Eastern (Turkish: Diarbakır Şarkovası) and Western (Diyarbakır Garbovası) sections. Several Armenian monasteries were preserved in Diyarbekir canton, which were prominent Armenian writing centers in the Middle Ages: St. Makabayetsvots or Antakh, Surb Tovma Arakelo (St. Thomas the Apostle's) or Aynebreghi, Surb Tovma Arakelo (St. Thomas the Apostle's) of Tarjli, Surb Astvatsatsin (the Holy Mother of God) of Alipunar.

The most Armenian-populated cantons were Central (Mardin) and Jezireh (historic Korduk and Beth-Zabde), where they were quite populous settlements, such as the town of Mardin and the Til-Armen settlement. Among the well-known Armenian sanctuaries were St. Gevorg Main Church (5th century) in Mardin and close St. Hovhannes Mkrtich (St. John the Baptist) or Tvin Hermitage. It should be noted that the predominantly Arab-speaking or Kurdish-speaking Armenians in Mardin sanjak were followers of the Armenian Catholic Church. And the remarkable feature of a significant part of the Armenian population of Jezireh canton was the semi-nomadic lifestyle that survivors of the Genocide preserved until the 1970s.

In 1915 Armenians of Diyarbekir and Mardin were subjected to mass destruction (barely 9% survived). Other Christians, especially the Assyrians (Jacobi, Kildani, etc.) also shared the same fate.

Резюме

ИСТОРИКО-ДЕМОГРАФИЧЕСКИЙ ОБЛИК ЗАПАДНОЙ АРМЕНИИ НАКАНУНЕ ГЕНОЦИДА АРМЯН

Часть 9. Диарбекирский санджак и провинции Мардин и Джезире Диарбекирского вилайета

Гегам М. Бадалян
Кандидат ист. наук

Ключевые слова - Диарбекирский вилайет, Бшерик, Сливан (Силван), Азро, Лче, Тур Абдин, Мардин, Джезире, Шарнах, Хазах, аширет Варто.

Диарбекирский вилайет был одним из наиболее древних (образован в 1517 г.) османских административных единиц и до первой половины 19-го века

охватывал как юго-восточные и южные части Великой Армении (Цопк, Ахдзник, Кордуена), так и Северную Месопотамию (Тур Абдин, Мардин, Мцбин-Нисибин, Санджар, Хабур). Одной из важных особенностей вилайета являлось существование полунезависимых и наследственных княжеств. После упразднения последних, с конца 1840-х годов, Высокая порта предприняла проведение существенных преобразований границ и внутренней структуры административных единиц Западной Армении. Вследствие этого во всей западной части бывшего Диарбекирского вилайета сформировался новый Харбердский эялет (с 1867 г. - вилайет Мамурет-ул-Азиз), а в 1879 г. новообразованному Битлисскому (Багешскому) вилайету были отданы провинции Хулп (Кохб) и Сиирт. А передачей Аргана-Маденского санджака из Харберда завершилось формирование внешних границ Диарбекирского вилайета (с 1867 г. губернии Османской империи были переименованы в вилайеты). До Первой мировой войны получила окончательный вид также внутренняя административная структура вилайета, состоящая из 4-х санджаков (Диарбекирский или Центральный, Аргана-Маденский, Мардинский, Северакский) и 15-ти провинций (тур. *kaza*). Площадь Диарбекирского вилайета составляла 47250 кв. км.

С точки зрения статистики, в частности, по армянскому населению, Диарбекирский вилайет представлен в источниках довольно плохо и фрагментарно, а доступные данные или противоречивы, или попросту отсутствуют. По этой причине исследователь часто сталкивается со значительными, даже серьезными сложностями. Дело в том, что данные Константинопольского патриархата, которые получались от резиденции главы Диарбекирской епархии, как правило, основывались на учете, проведенном не на должном уровне. Так, в известных армянских статистических бюллетенях 1912-1914 гг. численность армянского населения вилайета колеблется между 88000 и 124000. Совершенно отличны данные Товмаса Мкртчяна и Эдуарда Ноэля, условно названные нами британскими – 140000-150000. Определенное уточнение и дополнение более подробных показателей Э. Ноэля позволяют прийти к заключению, что накануне Первой мировой войны численность армянского населения Диарбекирского вилайета достигала 180000. Причем большинство армян было размещено в находящихся к северу от Западного Тигра провинциях Диарбекир (включая губернский центр), Бшерик, Сливан (Силван), Лче, которые административно входили в Центральный санджак. Составляла исключение только провинция Дерик, находящаяся южнее (на правом берегу) Западного Тигра, в районе Масиусских, или Мардинских гор. Из вышеупомянутых административных единиц по большой численности армянского населения особо выделялись граничащие друг с другом Сливан и Бшерик (Рашкан), которые занимали плодородные притигрские поля Нпркерта и Бшерика. До 1915 г. здесь были населены армянами более 130 сел и

поселков. Это число может быть и больше, так как армянское население многих провинций Диарбекира отличалось большой мобильностью и часто переселялось в населенные пункты с более благоприятными экономическими условиями. Много армян проживало в области (тур. *nahiye*) Азро, административно входящей в состав Сливана. Восточная часть Азро – Миграни (в армянских источниках – Миграник) – до 40-х гг. 19-го века была автономным армяно-курдским княжеством. Число армян было значительным также в провинции Лче, простирающейся на южных подножиях Армянского Тавра, и в городе Айни. Достаточно много армян проживало в непосредственной близости от города Диарбекир - на простирающемся в среднем бассейне Западного Тигра древнейшем земледельческом центре поле Амида с его восточной (тур. *Diyarbakır Şarkovası*) и западной (тур. *Diyarbakır Garbovası*) частями. В провинции Диарбекир сохранились несколько армянских монастырей, бывших в средние века знаменитыми центрами армянской письменности - монастыри Святых Маккавеев или Акнтаха, Святого Апостола Фомы или Айныбрыга, Святого Апостола Фомы в Тарджили, Святой Богоматери в Алипунаре.

В Мардинском санджаке наибольшее число армян проживало в Центральной провинции (Мардин) и в провинции Джебзире (ист. Кордуена и Бет-Забде), где встречаются достаточно многолюдные населенные пункты, как город Мардин и поселок Тиль-Армен. Среди известных армянских святынь были кафедральная церковь Святого Георгия (5-й век) в городе Мардин и близлежащий монастырь Святого Иоанна Крестителя, или Твин. Отметим, что в основном арабоязычные или курдоязычные армяне Мардинского санджака были последователями армянской католической церкви. А примечательной особенностью значительной части армянского населения провинции Джебзире был полукочевой образ жизни, который пережившие Великий геноцид сохранили до 70-х годов.

В 1915 г. армяне Диарбекира и Мардина подверглись массовому истреблению (выжили еле 9 %). Той же участи подверглись и остальные христиане, особенно ассирийцы (яковиты, халдеи и т. д.).

REFERENCES

1. «Ararat», S. Ėjmiatsin, 1896, N 9 (**In Armenian**).
2. «Armēnia», Marsel, 1896, N 80 (mayis 13) (**In Armenian**).
3. «Bnōrran», Yer., 2004-2007, N 1-4 (**In Armenian**).
4. «Otchjet o pojezdke po Aziatskoj Turcii general'nogo shtaba podpolkovnika Tomilova v 1904 gody, chast' pervaja: Rajon Bagdadskoj zheleznoj dorogi ot Adany do Mosula»; chast' vtoraja: «Podrobnyje marshrutnyje opisanija projdennyx putej ot Kavkaza cherez Kurdistan i Mesopotamiju k Sredizemnomu morju», S.-Peterburg, 1907 (**In Russian**).

5. «Tigranakerti nahangi jarderë yew k'iwrtu gazanut'iwnerë (akanatesi patmut'awn)», grets' **Tovmas G. Mkrtich'ean** (angliakan nakhkin der-hiwpatos Tigranakerti), Gahirë, 1919 (**In Armenian**).
6. «Tigris» taregirk', Halëp, 1946 (**In Armenian**).
7. GAT, **G. Srvandztyants'i** fond, «Lrats'uts'ich' nyut'er», vaveragir N 23 (**In Armenian**).
8. GAT, **T'. Azatyani** fond, bazhin III, vaveragir N 50 (**In Armenian**).
9. **Gippius A. I.**, Otchjet o pojezdke 1889 goda. Sbornik marshrutov, projdennyx v sovместnoj pojezdke D. D. Gedeonovym i A. I. Gippiusom po puti astronomicheskix rejsov Tureckoj Armenii, Kurdistane i Sirii, Tiflis, 1892 (**In Russian**).
10. **Inchichean Gh.**, Ashkharhagrut'awn ch'orits' masants' ashkharhi: Asioy, Yewropioy, Ap'rikoy yew Amerikoy, masn arajin: Asia, hat. A, Venëtik, S. Ghazar, 1806 (**In Armenian**).
11. **K'ëörōghlean G. M.**, Lëchë - «Biwrakn», K. Polis, 1899, N 8, 11 (**In Armenian**).
12. **Maevskij V. T.**, Voenno-statisticheskije opisaniye Vanskogo i Bitlisskogo vilactov, T., 1904 (**In Russian**).
13. **Mkund T.**, Amitayi ardzagank'ner, Uihök'ën, Niw Chërzi, 1950 (**In Armenian**).
14. **Mkund T.**, Amitayi ardzagank'neru verakoch'umn yew hat. B, Uihök'ën, Niw Chërzi, 1953 (**In Armenian**).
15. **Muratean G.**, Ditoghut'awn më - «Biwrakn», K. Polis, 1899, N 49 (**In Armenian**).
16. **S. N.**, Slivan gawarak: Miwfarghin. - «Biwrakn», K. Polis, 1899, N 23, 24 (**In Armenian**).
17. **Safrastyan A. Kh.**, Kostandnupolsi Hayots' patriark'arani koghmits' T'urk'iaiy ardaradatut'yan yew davanank'neri ministrut'yan nerkayate'vats haykakan yekeghets'ineri yew vank'eri ts'uts'aknern u t'ak'rirnerë.- «Ējmiatsin», 1965, N Zh, 1966, N A (**In Armenian**).
18. **Srvandztyan G.**, Yerker, hat. 2, Yer., 1980 (**In Armenian**).
19. **T.**, Morçs'uat ankiwner - «Arewelk'», Polis, 1903, N 5304 (**In Armenian**).
20. **Tër Karapetean Gegham (Mshoy Gegham)**, Tarōni vank'erë: Ughewori yishatakner, Yer., 2003 (**In Armenian**).
21. **Termen R. T.**, Otchjet o polevoj pojezdke 1907 goda v Vanskom, Bitlisskom i Diarbekirskom vilajetax, Tiflis, 1909 (**In Russian**).
22. **Trdat yeps. Palean**, Hay vanorayk', Sb. Ējmiatsin, 2008 (**In Armenian**).
23. **Voskean H.**, Sebastiaiy, Kharberdi, Tiarpëk'iri yew Trapizoni nahangneru vank'erë, Vienna, 1962 (**In Armenian**).
24. Ye. Ch'arents'i anv. grakanut'yan yew arvesti t'angaran (GAT), **T'. Azatyani** fond, bazhin III, vaveragir N 12 (**In Armenian**).
25. **Zhamkoch'ean B. K.**, Hayni, Pëjrut'-Libanan, 1952 (**In Armenian**).